

ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՈՏՆԱԶԱՅՆԻ ԿԱՐՈՏ ԱՐԱՀԵՏՆԵՐ

*(ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ)*

*(ԴՐԱՄԱ ԵՐԿՈՒ ՄԱՍԻՅ)*

*ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔ*

*ԵՎԱ – հեռախոսավարուհի – 60 տարեկան*

*ՄԱԹԵՆԻԿ – կոլտնտեսուհի – 55 տարեկան*

*ՄԱՆՎԵԼ*

*ՄԱՄՎԵԼ – Նրա որդիները – 32 և 30 տարեկան*

*ԺԵՆՅԱ – ուսուցչուհի – 70 տարեկան*

*ՎԱՐՄԵՆԻԿ – կթվորուհի – 40 տարեկան*

*ԼԵՎՈՆ – նրա ամուսինը: Այգեգործ բրիգադիր – 45 տարեկան*

*ԿԱՄՈ – Լևոնի որդին – 23 տարեկան*

*ՆԱԶԻԿ – օղակավարուհի – 20 տարեկան*

*ԱՐԱՅԻԿ – նրա ընկերը – 22 տարեկան*

*ԱՇՈՏ – վարորդ – 25 տարեկան*

*ՍՈՒՐԵՆ – կոլտնտեսության վարչության նախագահ – 30 տարեկան*

*ԳՈՀԱՐ – նրա կինը – 27 տարեկան*

*ԱՍՏՂԻԿ, ԳԱԳԻԿ – Լևոնի և Վարսենիկի երեխաները – 13 և 15 տարեկան*

*Գործողությունը տեղի է ունենում մեր օրերում՝ գյուղում*

## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

*(Բեմը ներկայացնում է գյուղի հեռախոսակայանը: Խրոցներով աշխատող հին կայան է:  
Սարքի առջև նստած է հեռախոսավարուհի Եվան: Անկյունում պատից կախված է  
հնաճ մի հեռախոս)*

ԵՎԱ - *(Խոսում է հեռախոսով, փոխելով խրոցները)* Այո, այո, շրջկենտրոն... Գրետա ջան, դո՞ւ  
ես... գյուղվարչություն միացրու, աղջիկ ջան, ընկեր Սեկոյանն է ուզում խոսել: Այո,  
ընկեր Սեկոյան, գյուղվարչությունն է:

*(Ներս է մտնում Սաթենիկը)*

ՍԱԹԵՆԻԿ – Բարև, Եվա...

ԵՎԱ – Բարին արևիդ: Սամվելի՞ն, թե Մանվելին:

ՍԱԹԵՆԻԿ – Մանվելին, խեղճ երեխայիս ականջը ցավում էր, ասում եմ՝ խոսեմ հետը  
տեսնեմ ո՞նց է:

ԵՎԱ – Կնկանը որ քիչ լսի, չի ցավա:

ՍԱԹԵՆԻԿ – Է՛հ... Փառք աստծո, իմ Սամվելի ու Մանվելի նման տղաներ հիմա քիչ կան:

ԵՎԱ – Ես էլ եմ ասում, էլի, փառք աստծո, որ քիչ կան:

ՍԱԹԵՆԻԿ – Հա՛... *(կռահում է)* Էդ դու ուրիշ մտքով ասացի՞ր, Եվուկ: Նրանք քեզ ինչ են արել,  
որ բերանդ էդպես անհարմար բաց ես անում:

ԵՎԱ – Ուրեմն ինչ որ քո նկատմամբ են անում, քիչ է, հա՞... Ամբողջ տարին մեջքդ ծռած  
աշխատում ես ու քրտինք-չարչարանքով ձեռք բերածդ... *(հեզնում է)* Էս իմ Սամվելին:  
Էս էլ իմ Մանվելին:

ՍԱԹԵՆԻԿ – Դե խեղճ երեխաներն ինչ անեն: Քաղաքում ապրելը դժվար է, Եվուկ ջան:

ԵՎԱ – Իսկ նրանք քաղաքում ի՞նչ են անում, է... Նրանց պորտը քաղաքում են կտրե՞լ:

*(հեռախոսը զնգում է)*

Այո, այո... Հոնուտը լսում է... Ո՞ւմ... Հարցնողն ո՞վ է, ներողություն... Հա՛... ընկեր  
Սեկոյանը ֆերմաներում է... Հա, ես քեզ շատ լավ եմ հիշում, աղջիկ ջան, ո՞նց չեմ  
հիշում... Անունդ էլ Իվետա էր, չէ՞... Բայց ընկեր Սեկոյանը ֆերմաներում է... Էսօր

դժվար թե գա, հա... *(ցած է դնում լսափողը)* Հողեմ գլուխդ... *(հեզնում է)* Ընկեր  
Սեկոյանին եմ ուզում... Շատ բան ես ուզում...

ՍԱԹԵՆԻԿ – Էդ ո՞վ էր: Նախագահը հրեն գրասենյակում նստած է:

ԵՎԱ – Քո բանը չի: Դու պետական գործերին մի խառնվի: *(Հավաքում է համար)*  
Շրջկենտրոն, Գրետա, Գրետա ջան, մի հատ Երևան ուզի: Հաշվի համարը տասնյոթ:  
44-15-88: Հա, քեզ մատաղ:

*(Մաթենիկին)* Նստի սպասի:

ՍԱԹԵՆԻԿ – Սիրոս շատ է անհանգիստ:

ԵՎԱ – Անհանգիստ կլինի, բա ի՞նչ: Ինչքան ժամանակ է պերեդաչի չես ուղարկել քո  
Սամվելին ու Մանվելին: Էն օրն էլ Աշոտն էր զարմանում: Էս ի՞նչ բան է, ասում էր,  
Մաթենիկ մայրիկը որոշել է իր բալիկներին սովամա՞հ անել, ինչ է: Մի շաբաթ է  
ուտելիք չի ուղարկում Երևան...

ՍԱԹԵՆԻԿ – *(Ծիծաղում է բարեհոգաբար)* Օյիբազը... Ամեն անգամ քաղաք գնալու  
ժամանակ մեր տան առաջ սիգնալ է տալիս: Տոլմա չե՞ս եփել, ասում է, տաք-տաք  
հասցնեմ ձերոնց:

ԵՎԱ – Սո՞ւտ է, որ... Ոնց որ ուսանող ժամանակ սովորեցրել էս, էդպես էլ ապրում են... Մեծ  
մարդիկ են, իրենց ընտանիքներն ունեն, համա էլի վիզները ծոած մոր ձեռքին են  
նայում: Մա էլ չեն կանչում գառնուկների նման, բա՞ են կանչում...

ՍԱԹԵՆԻԿ – Այ աղջի, չունեն, ի՞նչ անեն:

ԵՎԱ – Բա որ չունեն, ինչի՞ են քաղաքում նստել-մնացել: Թող գան էստեղ, ունենան: Օր  
ծերության ինչո՞ւ պիտի դու իրենց պահես... Թող գան իրենք պահեն քեզ: Դու համ  
տնամերձդ ես մշակում, համ դաշտում ես աշխատում, որ ի՞նչ... Ու պուպուի նման էլ  
ման ես գալիս ես հսկա տան մեջ... Խեղճ Մերգոս որ իմանար էսպես է լինելու,  
կսարքե՞ր քո էդ պալատները:

ՍԱԹԵՆԻԿ – Կգան, Եվա ջան, կգան, ջահել են, չեն հասկանում... Մի քիչ որ մեծանան, կգան,  
հողը կկանչի... Հո անտեր չեն թողնելու իրենց հորական տունն ու այգին... Կգան իմ  
տղերքը... Մեռնեմ նրանց... Կգան, կտեսնես...

ԵՎԱ – Է՛հ, ես ինչ... գոնե դու տեսնես... *(Զանգ)* Այո՞: Լսում եմ, ընկեր Սեկոյան: Չէ,  
Հայհամերգից զանգող չի եղել: Ի՞նչ: Ե՞ս զանգ տամ: Համարը ո՞րն է: Շատ լավ: Գրեցի:  
Իվետա Լալայա՞ն: Գրեցի, ընկեր Սեկոյան: Շտապ, բա ո՞նց, շտապ...

ՍԱԹԵՆԻԿ – *(Դուրս է նայում պատուհանից)* Հանդարտը գալիս է:

ԵՎԱ – Ո՞վ... Ախ, հա՛, ուսուցչուհի՞ն: Ինչ էլ կպավ խեղճի անունին Հանդարտը: Ամբողջ գյուղը  
եսուից Հանդարտ է կանչում: Էն օրն էլ մեր քարտուղարը լուսամուտից տեսնում է

Ժենյային ու թռռանն ասում է՝ մի վազի Հանդարտին ասա թող ինձ մոտ գա: Սա էլ վազում է, թե Հանդարտ տատիկ, պապիկը քեզ է կանչում:

ՍԱԹԵՆԻԿ – Վայ, վայ, վայ... Բարկենը՞:

ԵՎԱ – *(Օրծաղելով)* Չէ, փոքրը՝ Վաչիկը: Մի մատ երեխեն ի՞նչ իմանա, որ էդ տատիկի անունը Ժենյա է:

ՍԱԹԵՆԻԿ – Խեղճի աչքն էլ ճամփին մնաց: Ակադեմիկոսը չի գալի՞ս:

ԵՎԱ – Ո՞վ: Մինչև որ չբերեն, նա չի գա:

ՍԱԹԵՆԻԿ – Ո՞վ պիտի բերի, այ աղջի:

ԵՎԱ – Հարազատներն՝ ով, ու մեկ էլ թաղման կառավարական հանձնաժողովը:

ՍԱԹԵՆԻԿ – Վայ, լեզուդ չորանա, Եվա: Ի՞նչ չար հոգի ունես: Բա քո ասածը ասելո՞ւ բան էր:

ԵՎԱ – Հա: Քաղաքում մեծ-մեծ պաշտոն ունեցողներից ո՞րն է մինչև հիմա գյուղ ետ եկել, որ Ժենյայի ակադեմիկոս տղան Մոսկվայից ետ գա, այ Սաթենիկ: Մենակ մեռնելիս են հիշում, թե որտեղ են ծնվել ու որովհետև վախենում են կորչել քաղաքի հսկա գերեզմանատանը, դրա համար էլ վռագ-վռագ կտակ են գրում, թե իմ վերջին կամքն է, որ թաղեն իմ ծննդավայրում: Քաղաքում ապրում են, գյուղում թաղվում: Կարծես թե գերեզմանոց է գյուղը:

ՍԱԹԵՆԻԿ – Լեզվիդ տակ ասեղ չկա, ասեղ, քոռանամ ես, ինչ չէինք լսել, լսեցինք...

ԵՎԱ – Դու դեռ շատ բան կլսես... *(հեռախոսի զանգ)* Ալո, հա ընկեր Սեկոյան, մեռա զանգ տալով, չի պատասխանում: Ուրիշ համար չունե՞ք: Էլի զանգ կտամ: Գիտեմ, գիտեմ՝ Իվետա Լալայան, հրես աչքիս առաջ դրած է:

ՍԱԹԵՆԻԿ – Այ աղջի, ինչի՞ ես խաբում նախագահին, բա դու զանգ տվեցի՞ր:

ԵՎԱ – Քո բանը չի: Դու պետական գործերին մի խառնվի, Սաթենիկ աղջիկ... Դու քո զանգին սպասիր:

*(Ներս է մտնում ուսուցչուհի Ժենյան)*

ԺԵՆՅԱ – Բարև ձեզ... Բարև ձեզ, Եվա: Բարև ձեզ, Սաթենիկ: Ինչպե՞ս էք:

ԵՎԱ – Լավ եմ, ուսուցչուհի ջան, դո՞ւ ո՞նց ես:

ՍԱԹԵՆԻԿ – Բարև արևիդ, ընկեր Ժենյա:

ԺԵՆՅԱ – Մի ծրար տվեք ինձ, եթե կարելի է, Եվա...

ԵՎԱ – Ծրա՞ր:

ԺԵՆՅԱ – Այո, Ադիկիս ծննդյան օրն է: Ես պետք է նամակ ուղարկեմ նրան:

ԵՎԱ – Ճի՞շտ: Պատկերացնում եմ, թե ակադեմիկոսն իր ծննդյան օրը ինչքան նամակներ, հեռագրեր կստանա...

ԺԵՆՅԱ - *(Երջանիկ)* Ամբողջ աշխարհից... Ադիկս տասնհինգ ակադեմիաների պատվավոր անդամ է, Եվա... Եվ իհարկե ամբողջ միությունից:

ՍԱԹԵՆԻԿ – Բա էդքան նամակների ու հեռագրերի մեջ քո նամակը կգտնի՞, ընկեր Ժենյա...

ԺԵՆՅԱ – Ես համոզված եմ, որ նա հարյուրավոր, հազարավոր նամակների մեջ կփնտրի և կգտնի իմ նամակը, սիրելի Սաթենիկ... Նա ինձ շատ է սիրում... Իմ Ադիկը... Եթե միայն դուք կարդայիք նրա նամակները...

ԵՎԱ - *(Մեկուսի)* Իբրև թե չեմ կարդում: Հա, նամակներ ուղարկում է, բան չունեմ ասելու, մենակ նամակներ, էն էլ բացիկների վրա գրած...

ԺԵՆՅԱ – Ինչպե՞ս... Եվ ամեն անգամ, ամեն անգամ գրում է. «Մայրիկ ջան, դու աշխարհի ամենալավ մայրիկն ես»: Եվ գիտե՞ք, մայրիկ բառը միշտ հայերեն է գրում, դեռևս մանկական ձեռագրով: Ադիկս ինձ շատ է սիրում:

ՍԱԹԵՆԻԿ – Քեզ ո՞վ չի սիրում, ընկեր Ժենյա: Ամբողջ գյուղը քո արևով է երդվում: Դու մեր երեխաներին էնպես ես սովորեցնում, որ ոչ ոք չի հավատում, թե նրանք գյուղում են ավարտել դպրոցը:

ԺԵՆՅԱ – Գիտեմ, գիտեմ, ես շատ շնորհակալ եմ Հոնուտից: *(Շիծաղում է)* Գիտեմ նաև, որ բոլորն ինձ «Հանդարտ» անունն են կպցրել, բայց ես չեմ նեղանում: ՍԱԹԵՆԻԿ – Ախր դե դուք էլ շատ եք սիրում ասել հանդարտ, ուսուցչուհի ջան:

ԺԵՆՅԱ – Եթե աղմուկ չլիներ, չէի ասի, Սաթենիկ...

*(Նստում է սեղանի մոտ, ծրարը դնում է իր առջև և սկսում գրել)*

ԵՎԱ – Իսկ եթե ուժն իմ ձեռքին լիներ, ես չէի թողնի, որ Ժենյան թեկուզ մի օր դաս տար մեր դպրոցում:

ՍԱԹԵՆԻԿ – Վա՞յ...

ԺԵՆՅԱ – Ինչո՞ւ, Եվա:

ԵՎԱ – Որովհետև ոչ մեկը մեր գյուղին էնքան վնաս չի տվել, ինչքան դու:

ՍԱԹԵՆԻԿ – Խելքդ թոցրի՞ր, այ աղջի:

ԺԵՆՅԱ - *(Սաթենիկին)* Հանդարտ, հանդարտ: Ի՞նչ իմաստով, քույրիկս...

ԵՎԱ – Հենց էն իմաստով, որ երեխաներից ով ինստիտուտ է դիմում, ընդունվում է ու մնում:  
Որ լավ չսովորեցնեիր, կկտրվեին ու ետ կգային... Ու գյուղը չէր դատարկվի էսպես...

ՄԱԹԵՆԻԿ – Վայ, խելքիդ ձյուն գա, Եվուկ...

ԵՎԱ – Կամ էլ թե՛ մենակ լեզու սովորեցնելը քիչ է, ուսուցչուհի ջան, մի նեղանա... Ես Եվուկն  
եմ, ինձանից նեղանալ չի կարելի: Ես ինքս աշխարհից ու ինձանից նեղացած մարդ եմ:  
Մենակ լեզու սովորեցնելը քիչ է, ուսուցչուհի ջան: Ո՞ւմ է պետք, որ երեխաները  
սիրում են լեզուն, բայց մոռանում են իրենց տունը, հողը, ծնողներին... Եվ ինչքան շատ  
են սովորում, էնքան ավելի շատ են հեռանում իրենց տնից, հողից, ծնողներից...

ՄԱԹԵՆԻԿ – Վերջ տուր, Եվա... Էսօր քեզ ի՞նչ է պատահել...

ԺԵՆՅԱ – Հանդարտ, հանդարտ, Սաթենիկ... Դժբախտաբար Եվան իրավացի է... Ոչ թե լեզու  
սովորեցնելու հարցում... Չէ... Եվ ինքն էլ գիտի, որ այդպես չի... Բայց որ մեր  
երեխաները գյուղ չեն վերադառնում, դա փաստ է: Դա մի ահավոր ու տխուր փաստ է:  
Եվ այդ հարցում մենք էլ մեր մեղքն ունենք: Եվ ես էլ, ես էլ...

*(փղձկում է):*

ԵՎԱ - *(Վերցրել է լասփողը)* Հա, Հրանտիկ, Հրանտիկ ջան, ասել եմ... վաղը բիդոնները  
կուղարկեն... Կուղարկեն, բալիկ ջան: Հրանտիկ, աղջիկներին ասա ինձ համար ուրց  
հավաքեն, ուրց... Հա, բալիկ ջան: Երանի ձեզ, որ սարում եք...

*(Թխկթխկացնում է)* Ալո, ալո, լսում եմ, Գրետա ջան: Չէ: Ո՞վ: Հա, ասա ընկեր  
Մեկոյանը ֆերմաներում է: Դե որ տեղում չէ, ես ի՞նչ անեմ: Հայհամերգից չէ, թեկուզ  
Հայգազից լինի: Չկա:

*(Մի կողմ)* Երես եմ ասել, հա՛... Գրետա, Երևանի համարն ի՞նչ եղավ... Ապրես,  
միացրու... Սաթենիկ, չորրորդ խցիկը:

ՄԱԹԵՆԻԿ - *(Շվարած աջ ու ձախ է նայում)* Վա՞յ, վա՞յ, չորրորդը ո՞րն է, Եվուկ...

ԵՎԱ - *(Պատի հեռախոսը ցույց տալով)* Վերցրու:

ՄԱԹԵՆԻԿ – Վայ, բա սա չորրորդն է՞:

ԵՎԱ – Էսօր չորրորդն է...

ՄԱԹԵՆԻԿ - *(Վերցրել է լասփողը)* Ալո՞, Գայանե՞... Ես եմ, Գայանե ջան, մաման եմ: Մանվելի  
ականջը ո՞նց է... Ի՞նչ... Մանվել է... Ո՞նց ես, տղա ջան, ականջդ ո՞նց է, լա՞վ է... Դե լավ  
է, լավ է... Ես էլ լավ եմ, էլի, տղա ջան, մենակ թե շատ եմ կարոտում ձեզ... Ինչի՞ տուն  
չեք գալիս, ցավդ տանեմ... Տուն եկեք, հերիք է, էլի... Դե լավ, լավ, չեմ խոսում... Մանվել  
ջան, հա, Մանվել ջան, երեխեն... Դե, տավարը սարն եմ ճամփել, որ կաթ ուղարկեն,  
կքաշեմ, կբերեմ... մի քիչ մածուն եմ քամել... Հա, ինչ որ հավաքել եմ՝ Աշոտի հետ

կուղարկեմ: Ձեռներս ցավում են, ի՞նչ կլինի, որ դուք գաք քաղեր... Ասում եմ... դե լավ, լավ...

*(Վախեցած Եվային նայելով, կամացուկ)*

Այ ցավդ տանեմ, ո՞վ է տարբերություն դնում: Ինչ որ Մամվելին եմ ուղարկում, էն էլ քեզ եմ ուղարկում, գառ ջան: Քոռանամ, թե սուտ եմ ասում: Հա, բայց նրանք էլ չորսն են, չէ՞: Հա, բայց...

*(Մնում է կանգնած, լսափողը ձեռքին պահած):*

ԵՎԱ – Հը, ինչպե՞ս էր Մամվելիկդ, գառնուկդ կաթ էր ուզո՞ւմ...

ՍԱԹԵՆԻԿ – *(Չարացած)* Քե՞զ ինչ: Քե՞զ ինչ, այ վիուկ: Բավական չի՞: Ասում եմ՝ բավական չի՞ ...

ԺԵՆՅԱ – Հանդարտ, ի սեր աստծո, հանդարտ...

ՍԱԹԵՆԻԿ – Շատ էլ լավ են անում, որ ուզում են: Իմ երեխաներն են, ինձնից են ուզում: Բա քեզնից պիտի ուզե՞ն: Բա ո՞ւմ համար եմ աշխատում: Ո՞ւմ համար եմ ապրում: Ես բերել եմ, ես էլ պահում եմ: Սիրտդ ճաքում է, հա՞: Շատ կուզենայիր, որ դու էլ երեխա ունենայիր, ու քո երեխաները թեկուզ մենակ տանեին, հա տանեին քեզանից: Շա՛տ կուզենայիր...

ԺԵՆՅԱ – Սաթենիկ, ինչեր եք ասում, չէ՞ք ամաչում...

ՍԱԹԵՆԻԿ – Կարծես թե ես եմ մեղավոր, որ ինքը երեխա չունի... Ունենայիր: Հազար ուզողներ ունեիր, պսակվեիր մարդավարի, ունենայիր... Քո ձեռքով քո կյանքը թունավորել ես, հիմա էլ մեր կյանքն ես թունավորում...

ԺԵՆՅԱ – Վերջ տվեք, Սաթենիկ, և անմիջապես ներողություն խնդրեք:

ԵՎԱ – *(Քարացած կանգնել է)* Ոչինչ, ոչինչ, ուսուցչուհի ջան, երևի Սաթենիկը իրավունք ունի... Ոչինչ... *(Ղուրս է նետվում հուզված)*

ԺԵՆՅԱ – Այդ ի՞նչ արեցիք, Սաթենիկ... Ես, ես ամաչում եմ ձեր փոխարեն... Ներեք, բայց ես իրավունք ունեմ նախատելու ձեզ, որովհետև... որովհետև ձեր ուսուցչուհին եմ եղել... և նրա: Եվ... Երևի ես բոլորովին էլ լավ ուսուցչուհի չեմ եղել, եթե... եթե իմ աշակերտուհիները կարող են այ այսպես խոսել միմյանց հետ...

ՍԱԹԵՆԻԿ – *(Փղձկում է)* Բա ի՞նչ անեի, բա ի՞նչ անեի... Ախր վառում է, է՛... Ախր ինչ որ ասում է՝ ճիշտ է ասում: Բայց եղպես չի կարելի, չէ՞: Բա ճիշտը եղպես... եղպես երեսին կասե՞ն, սիրտ է, ցավում է, չէ՞ ...

ԺԵՆՅԱ – Ճիշտը միշտ էլ ցավեցնում է, Սաթենիկ:



ՄԱԹԵՆԻԿ – Մեղք ենք, չե՞: Առանց էլ էլ իմ երեխաները վառում են ինձ, ուսուցչուհի ջան:  
Բայց ես ի՞նչ անեմ, ո՞ւմ բողոքեմ...

ԺԵՆՅԱ – Դե լավ, լավ... հանգստացեք... Հանգստացեք ու աշխատեք ձեր հերթին անարդար չլինել ուրիշների նկատմամբ: Չե՞ որ դուք էլ գիտեք, որ անարդարացի խոսքեր էիք ասում Եվային: Մի՞ թե մեղքը նրանն է, որ չի ամուսնացել: Մի՞ թե մեղք է, որ նա ամբողջ կյանքում հավատարիմ է մնացել իր առաջին սիրուն – իր ամուսնուն և սպասել:

ՄԱԹԵՆԻԿ – Հա, բայց կարելի՞ է քառասուն տարի սպասել: Սև թուղթը հենց ինքն է ստացել 44-ին:

ԺԵՆՅԱ – Ուրեմն կարելի է, որ սպասում է: Այ դուք նախատեցիք նրան, այնինչ նրա անսահման հավատարմության մասին կարելի է երգեր ու նույնիսկ վեպեր գրել, սիրելի Սաթենիկ: Եվ կարելի է ինչ-որ չափով նախանձել նրան: Եվ կարելի է հիանալ ու հպարտանալ, որ աշխարհում այդպիսի մեծ սեր կա...

ՄԱԹԵՆԻԿ – Հնարել է, թե ամեն գիշեր իբր Վարդանը տուն է գալիս... Հենց սկզբից, որպեսզի ուզողներին հեռացնի... Ու եղպես տարիներ շարունակ...

ԺԵՆՅԱ – Իսկ գուցե չի՞ հորինել:

ՄԱԹԵՆԻԿ – Վայ, ուսուցչուհի ջան, ուրեմն դու էլ ես հավատո՞ւմ, թե մեռած մարդը կարող է հարություն առնել, գալ, նստել ու գրույց անել մարդու հետ:

ԺԵՆՅԱ – Ես չգիտեմ, Սաթենիկ, բայց երևի եթե շատ ես սպասում, կարող է գալ: Իսկ եթե նույնիսկ չգա, միննույն է, եթե հիշում ես, ուրեմն նա կա, ապրում է: Որովհետև, իմ խորին համոզմամբ մեռած են միայն նրանք, ում ոչ ոք չի հիշում: Իսկ այդպիսիները կարող են նույնիսկ ֆիզիկապես մեռած էլ չլինել:

ՄԱԹԵՆԻԿ – Հա, դե մարդ կա, որ եղած թե չեղած՝ ոչ մի նշանակություն չունի: Ոչ մեկին պետք չի:

ԺԵՆՅԱ – Խոսքս հենց այդ մասին է, Սաթենիկ:

ՄԱԹԵՆԻԿ – Ընկեր Ժենյա, կարծում ես իմ սիրտը չի՞ ցավում Եվայի համար: Բայց ախր շատ չար լեզու ունի: Ախր ինչի՞ց է եղբան կոպիտ:

ԺԵՆՅԱ – Որպեսզի ոչ մեկը չփորձի խղճալ նրան:

ՄԱԹԵՆԻԿ – Իսկ որ ծաղրում ու ծիծաղում է անընդհատ...

ԺԵՆՅԱ – Որպեսզի լացը թաքցնի, Սաթենիկ, ինչպես իր գեղեցկությունն է թաքցրել, որպեսզի Վարդանից բացի ոչ ոք չտեսնի նրա գեղեցկությունը...

*(Հեռախոսը զանգում է)*

Հեռախոսն է, ձայն տվեք Եվային, Սաթենիկ:

ՄԱԹԵՆԻԿ – Չէ, ես խռով եմ;

ԺԵՆՅԱ - *(Օրծաղում է)* Իսկապես որ, մարդկանց համար տարիքը նշանակություն չունի:  
Երեխա հո չեք... Խռով եմ... Չայն տվեք... Եվա, Եվա...

*(Հեռախոսը զանգում է)*

Բայց գուցե շատ կարևոր զանգ է, գոնե դուք վերցրեք լսափողը...

ՄԱԹԵՆԻԿ - *(Վախենալով մեկնում է ձեռքը, վերցնում, և խոսում է գրեթե Եվայի ձայնով)* Ալո,  
Հոնուտը լսում է: Ի՞նչ... Ընկեր Սեկոյանը... Ո՞վ է... Հա՛, Հայհամերգից... *(Ներս է մտել Եվան)* Ընկեր Սեկոյանը ֆերմաներում է, աղջիկ ջան... կներեք... *(Անջատում է:)*

ԵՎԱ - *(Փողկացնում է)* Ապրես... Հիմա էլ հո չես կարող երդվել, թե կյանքումս սուտ ասած չկամ:

ՄԱԹԵՆԻԿ – Քեզանից ի՞նչ պիտի սովորեմ:

ԺԵՆՅԱ – Այ այդպես, այ այդպես... խոսեք, խոսեք ու հաշտվեք... Ախր դուք իմ ամենախելացի աշակերտուհիներն եք:

ՄԱԹԵՆԻԿ – Դե լավ, ես գնացի, մնաք Բարով, ընկեր Ժենյա:

ԵՎԱ – Գնա, գնա լոբի քաղի, Սամվելիկո լոբի շատ է սիրում...

ՄԱԹԵՆԻԿ - *(Ժենյային)* Ըհը... էդ էլ քո խելացի աշակերտուհին... Գնամ, գնամ, քանի սիրոս չի պայթել...

ԺԵՆՅԱ – Հանդարտ, հանդարտ, աղջիկներ, այ քեզ պատուհաս...

*(Ներս են մտնում Գազիկն ու Աստղիկը՝ պիտներական վզկապներով):*

ԵՐԵՄԱՆԵՐԸ – Բարև ձեզ:

ՄԵԾԵՐԸ – Բարև ձեզ:

ԳԱԳԻԿ – *(Պատվի բռնած)* Հոնուտի միջնակարգ դպրոցի Վարդան Մելոյանի անվան պիտներական դրուժինայի խորհուրդը որոշել է շեֆություն վերցնել գյուղի միայնակ տատիկների ու պապիկների նկատմամբ:

ԵՎԱ – Ուրեմն գյուղի կեսի շեֆությունը պիտի վերցնեք, էլի...

ԺԵՆՅԱ – Հանդարտ, հանդարտ... Ապրեք, երեխաներ: Լսում ենք ձեզ:

ԳԱԳԻԿ – Ընկեր Ժենյա, Եվա տատիկ և Սաթենիկ տատիկ, խնդրում ենք ասել, թե մենք ինչով կարող ենք օգնել ձեզ:

ԺԵՆՅԱ – Պետք է մտածել: Իսկ ի՞նչ կարող եք անել դուք:

ԱՍՏՂԻԿ – Կարող ենք մաքրել և հավաքել սենյակները:

ԳԱԳԻԿ – Կարող ենք ցախ կտրել, վերանորոգել ցանկապատը, մաքրել գոմերը:

ՍԱԹԵՆԻԿ – Է՛, տղա ջան, հիմա գոմում ինչ կա, որ մաքրեք...

ԱՍՏՂԻԿ – Կարող ենք օգնել, որպեսզի հավաքեք այգու բերքը...

ԵՎԱ – Է ձեզանից հետո այգում բան կմնա՞ :

ԺԵՆՅԱ - *(Նախատինքով)* Եվա...

ՍԱԹԵՆԻԿ – Երեխաներ ջան, Վարսենիկի երեխաներն եք, չէ՞:

ԳԱԳԻԿ – Այո:

ՍԱԹԵՆԻԿ – Ուրեմն Սաթիկ ու Պետիկ...

ԳԱԳԻԿ – Ոչ, Գագիկ և Աստղիկ...

ԵՎԱ – Իսկ ձեզանից մեծերը՞...

ԱՍՏՂԻԿ – Խաչիկը, Վաչիկն ու Հրաչիկն են:

ԵՎԱ – Իսկ փոքրերը՞:

ԳԱԳԻԿ – Մանիկը, Աշիկն ու Սաշիկը:

ԵՎԱ – Ամենափոքրի՞ անունն ինչ է:

ԱՍՏՂԻԿ – Անդրանիկ:

ԵՎԱ – Թե՞ Բավական:

ԱՍՏՂԻԿ – Չէ, տղա է, Եվա տատիկ:

ԵՎԱ – Ապրեն ձեր ծնողները:

ԺԵՆՅԱ – Շնորհակալություն, երեխաներ, մենք կմտածենք ու կասենք ձեզ, այո՞:

ԳԱԳԻԿ – Այո, ընկեր Ժենյա... Ցտեսություն:

*(Երեխաները հրաժեշտ են տալիս ու հեռանում):*

ԺԵՆՅԱ – Իրոք որ ապրեն Վարսենիկն ու Լևոնը: Տասը երեխա ունեն և տասն էլ գյուղում են, իրենց աչքի առաջ:

ԵՎԱ – Բա չէ... Մանվելու ու Սամվելու...

ՍԱԹԵՆԻԿ – Ես գնացի, ընկեր ժենյա... Թե չէ էլի մի այնպիսի բան կասեմ, որ հետո փոշմանելու եմ... Էլ չեմ դիմանում:

*(Դուրս է գալիս)*

ԺԵՆՅԱ – Եվա, ի՞նչ եք ուզում Սաթենիկից: Ինչո՞ւ եք տանջում: Չի կարելի, չէ՞ ...

ԵՎԱ – Լավ եմ անում: Էնքան տանջելու եմ, մինչև որ ինքն էլ իր տղաներին տանջի ու ոչ թե փխսի-փխսի անի: Որ նրանց չմատակարարի՝ մի օր էլ չեն մնա քաղաքում: Ախր ինչի՞ պետք է նա էլ անտեր, մենակ մնացած տատիկ համարվի, ընկեր ժենյա: Բա դա խղճի՞ բան է: Բա մարդ մեր լինի ու զավակ չունենա՞, տատ լինի ու թոռ չունենա՞ :

ԺԵՆՅԱ – Ի՞նչ կարող ես անել: Մի՞թե դու էլ մենակ չես, Եվա:

ԵՎԱ – Չէ: Իմն ուրիշ է: Ով չէ, դու հո գիտես, որ իմն ուրիշ է, ընկեր ժենյա:

ԺԵՆՅԱ – Հասկանում եմ: Հասկանում եմ: Էլի գալի՞ս է... Վարդանը:

ԵՎԱ - *(Ամաչելով)* Ամեն օր: Հենց որ մենակ եմ մնում ու սեղանին եմ դնում թեյը, գալիս նստում է իմ դիմաց...Ճիշտ ոնց որ էն անտեր օրը, 41 թվի հունիսի 23-ին:

ԺԵՆՅԱ – Այո, այո... Իհարկե...

*(Հեռախոսի զանգ)*

ԵՎԱ – Այո՞, Հոնուտը լսում է: Գրետա՞: Ես եմ, աղջիկ ջան: Լևոն Ապլանյա՞ն: Բա իհարկե կա: Մեր գյուղի հերոս հայրն է, տասը երեխա ունի, ոչ թե քո ծույլ ու անբան Երեմի նման: Ի՞նչ: Նրա տասը երեխաներն էլ գյուղում են, Գրետա ջան: Երկուսն էլ հենց նոր էստեղ էին: Ի՞նչ, ով է էդտե՞ղ: Լևոնի տղա՞ն: Կամո՞: Նա Կամո անունով տղա չունի, աղջիկ ջան: Ամեն տեսակի անունով ունի, բայց Կամո չունի: Ո՞նց թե նոր է եկել: Որտեղի՞ց: Լեհաստանի՞ց: Բան չեմ հասկանում: Ի՞նչ... *(Լսում է: Ժենյային)* Հոնուտիները գործ գտան: Լսում եմ, լսում...

ԺԵՆՅԱ – Այդ ի՞նչ Կամո է, ո՞վ է, ո՞վ է, Եվա...

ԵՎԱ – Հանդարտ, հանդարտ... Վայ, շատ ներողություն, ընկեր ժենյա... *(Լսափողի մեջ)* Դե թող գա, էլ ի՞նչ պիտի անի... Ավտո կա՞ ... Հա՞ ... Այ աղջիկ ջան, գուցե թե առաջ ինձ մոտ ուղարկես՝ տեսնեմ թե ով է, ինչ է... Տեսնենք ինչ ենք անում... Հա, հա... *(անջատում է)*

ԺԵՆՅԱ – Այդ ի՞նչ պատմություն է, Եվա...

ԵՎԱ - *(Տարակուսած)* Բան չհասկացա, ընկեր ժենյա ջան: Կարծես թե մեր էս հերոս հայրը, Լևոնը, Լեհաստանում էլ է մի տղա ունեցել: Ու հիմա հայտնվել է տղան:

ԺԵՆՅԱ – Այ քեզ բան... Իսկ Լևոնը գիտի՞ ...

ԵՎԱ – Լևոնը գիտի թե չէ՝ չգիտեմ: Բայց որ Վարսենիկը չգիտի՝ դա հաստատ է: Իսկ իմացավ, թե ինչ է անելու, էդ էլ չգիտեմ... Խեղճեր... Երեխա չունեին... մեկն էլ ավելացավ:

ԺԵՆՅԱ – Սակայն ի՞նչ կապ ունի Լևոնը Լեհաստանի հետ...

ԵՎԱ – Որ բանակ տարան, մի քանի ամիս ծառայել է Էստոնի, հերիք չի՞ ... Հերոս է, չէ՞ ...

ԺԵՆՅԱ – Տեր աստված... Հիմա ի՞նչ պետք է անենք... այդպես հանկարծակի... Ինչպե՞ս պետք է տեղեկացնել Լևոնին ու Վարսենիկին... Եվա...

### **ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ**

*(Գյուղի այգու պահեստը: Կանոնավոր շարված են մրգի արկղեր: Բրիգադիր Լևոնը նստած է սեղանի մոտ, էլեկտրահաշվիչի վրա հաշվարկներ է անում: Չայն է տալիս դեպի դուրս):*

ԼԵՎՈՆ – Ով արկղ չբերեց, միրգ չեք տալիս: Ես գործը չեմ կանգնեցնելու: Աշոտ, Աշոտ ջան, հետևի, որ հասածը քաղեն: Ափսոս է, թափվում է ամբողջը:

*(Ներս է նետվում Գագիկը)*

ԳԱԳԻԿ – Հայրիկ, ձորի վրա կախված բոլոր ծառերը քաղեցինք, հիմա ի՞նչ անենք:

ԼԵՎՈՆ – *(Հիացած նայում է որդուն)* Էս ո՞ր մեկն է, ո՞ր մեկը...

ԳԱԳԻԿ – Գագիկն եմ, հայրիկ:

ԼԵՎՈՆ – Այ տղա, տարբեր հագնվեք, որ գոնե ձեր հերը ձեզ ճանաչի: Ուրիշների մոտ խայտառակ եմ լինում:

ԳԱԳԻԿ – Հայրիկ ջան, շորերը հո դու ես առնում, մենք ի՞նչ մեղավոր ենք:

ԼԵՎՈՆ – Բա է՞ս ինչ մեղավոր եմ, որ խանութում մենակ մի տեսակ շորեր են լինում, այ բալա: Հիմա սկսեք աղբյուրի մոտից: Սկզբից թափվածները հավաքեք ու լցրեք կարասները, հետո նոր ծառերը բարձրացեք:

ԳԱԳԻԿ – Եղավ, հայրիկ ջան...

*(Դուրս է գալիս: Ներս է մտնում Աշոտը)*

ԱՇՈՏ – Հարգելի ընկեր բրիգադիր, ես արդեն տասնչորս ռեյս արել եմ, իրավունք ունե՞մ հանգստանալու:

ԼԵՎՈՆ – Ձմռանը կհանգստանաս:

ԱՇՈՏ – Ստիպված եմ դիմելու պրոֆմիությանը:

ԼԵՎՈՆ – Ձմռանը, ձմռանը, դիմում կգրես, կբերես կնայեմ...

ԱՇՈՏ – Ճա՞րս ինչ, քեզանից քեզ պիտի բողոքեմ, Լևոն ջան: Բոլոր պաշտոնները գրավել եք ու խեղդում եք երիտասարդությանը:

ԼԵՎՈՆ – Է՛, Աշոտ ջան, ձեռքներս երիտասարդոթյո՞ւն է ընկնում, որ խեղդենք: Ով գլուխը բարձրացնում է, քաղաք է փախչում: Տար, տղա ջան, արկղերը տար...

ԱՇՈՏ – Այգին շրջապատել են... Որսի հոտն առած քերձեների պես վարորդները պտտվում են չորս կողմը, պահակներին փող են առաջարկում:

ԼԵՎՈՆ – Մի հատիկ էլ չեմ տա: Մինչև մեր մառանները չլցնենք, մինչև մեր պլանը չկատարենք, ոչ մի ազատ վաճառք:

ԱՇՈՏ – Քո տեղն են հարցնում:

ԼԵՎՈՆ – Չասես... Մեկ է, աստվածս էլ գա, չեմ տա... Դու արկղերը տար, Աշոտ ջան, Խաչիկը, Վաչիկն ու Հրաչիկը հիմա երևի պարապ կանգնած են...

ԱՇՈՏ – Համա թե պարապ կանգնող գտար... Նրանք դեռ գիշերն են իրենց արկղերը տարել...

*(Ներս է ընկնում Պետիկը)*

ՊԵՏԻԿ – Հայրիկ, մենք ենք պարապ կանգնած, արկղ չկա:

ԼԵՎՈՆ – Էս ո՞ր մեկն է, ո՞ր մեկը:

ՊԵՏԻԿ – Պետիկն եմ, հայրիկ:

ԼԵՎՈՆ - *(Աշոտին)* Տեսա՞ր: Դե շուտ, արկղ հասցրու, տղա ջան...

*(Պետիկն ու Աշոտը դուրս են գնում: Բանալին ձեռքին պտտեցնելով Լևոնին է մոտենում Արայիկը)*

ԱՐԱՅԻԿ – Բարև ձեզ:

ԼԵՎՈՆ - *(Երկար նայում է նրան)* Միրգ չունենք:

ԱՐԱՅԻԿ – Իսկ ձեզանից ո՞վ միրգ ուզեց:

ԼԵՎՈՆ – Բա դա ի՞նչ է *(ցույց է տալիս բանալին)*:

ԱՐԱՅԻԿ – Սա՞... Իմ «Ֆիատի» բանալին է:

ԼԵՎՈՆ – Հա՞... Բարև, տղա ջան, բա ի՞նչ ես ուզում:

ԱՐԱՅԻԿ – Ես Նազիկին եմ ուզում տեսնել: Գնացի տուն, ասացին, որ այստեղ է:

ԼԵՎՈՆ – Ճիշտ են ասել: Իսկ դու, ամոթ չլինի հարցնելը, ո՞վ էս:

ԱՐԱՅԻԿ – Ես նրա հետ եմ ավարտել: Իմ անունը Արա է, այսինքն՝ Արայիկ:

ԼԵՎՈՆ – Ուրեմն գյուղատնտես ես... այգեգործությա՞ն զծով:

ԱՐԱՅԻԿ – Այո: Ես Նազիկին որտե՞ղ կարող եմ գտնել:

ԼԵՎՈՆ – Եթե ուզում ես օգնել նրան, Արայիկ, տեղը կասեմ:

ԱՐԱՅԻԿ – Օգնե՞մ, ինչո՞վ:

ԼԵՎՈՆ – Ձեռքերով: Դեղձ քաղիր... Տուն գնալուց երկու արկղ դեղձ կտամ:

ԱՐԱՅԻԿ - (*Շիծաղում է*) Դեղձն իմ ինչի՞ն է պետք: Խանութները լիքն է:

ԼԵՎՈՆ – Խանութներում այսպիսի դեղձ չկա:

ԱՐԱՅԻԿ – Է, շուկայո՞ւմ էլ չկա:

ԼԵՎՈՆ – Շուկայում դեղձ կա, բայց Նազիկ չկա:

ԱՐԱՅԻԿ – Կատակասեր մարդ եք երևում, քեռի:

ԼԵՎՈՆ – Շա՛տ... Իսկ ինչի՞ եք փնտրում Նազիկին, հո չե՞ք ուզում հետը ամուսնանալ:

ԱՐԱՅԻԿ - (*Չարացած*) Բայց դա ձեզ վերաբերվում ա՞...

ԼԵՎՈՆ – Իհարկե վերաբերում է: Եթե քեզ նման մեկը, ավտոյի բանալին այդպես ֆռոացնելով գալիս ու ուզում է մեր օղակավար աղջկան իր գյուղը տանել, ինչպե՞ս մեզ չի վերաբերում:

ԱՐԱՅԻԿ – Գյո՞ւղ, ով ասաց գյուղ...

ԼԵՎՈՆ – Սպասիր, ուրեմն գյուղ էլ չի, հա՞... Ուրեմն ականջիդ ետևը կտեսնես, Նազիկին չես տեսնի:

ԱՐԱՅԻԿ – Յա...

(*Ներս է գալիս Մեկոյանը*)

ՄԵԿՈՅԱՆ – Ո՞նց են գործերը, Լևոն:

ԼԵՎՈՆ – Ոնց պիտի լինեն, ընկեր Մեկոյան, բերքը թափվում, փչանում է, հավաքող չկա: Մեր արածը՝ ոնց որ հավի քջուջ: Ախր ես ձեզ խնդրեցի...

ՍԵԿՈՅԱՆ – Մարդ չկա, Լևոն, ի՞նչ անեմ: Կարգադրել եմ, որ գյուղի ծերունիներին ու պառավ կանանց էլ հավաքեն: Շինարարությունը կանգնեցրել եմ: Բուժկայանը փակել եմ: Խանութները փակել եմ, վարսավիրանոցն ու արհեստանոցները փակել եմ: Քիչ առաջ հետս էլ միլիցիայի տեսուչին բերեցի ու հենց իր համազգեստով բարձրացրեցի ծառը, էլ ի՞նչ անեմ: Գյուղում մենակ Եվան է մնացել հեռախոսի մոտ:

ԼԵՎՈՆ – (Օհժաղում է) Ցավ է, էլի: Բերք չի լինում՝ լաց ենք լինում, լինում է՝ լաց ենք լինում:

ՍԵԿՈՅԱՆ – Ոչինչ, թող լինի, մենք էլ լաց լինենք: Ո՞վ կսպասեր, որ էս քարերի մեջ դեղձ կբռնի ու խաղող կաճի: Դեռ սպասիր, մյուս տարի քառասուն հեկտար էլ ենք դնելու այգիների տակ...

ԼԵՎՈՆ – Է՛, աշխատողն ով է, ընկեր Սեկոյան, պառավների բրիգադով նոր այգիներ եք մշակելու...

ՍԵԿՈՅԱՆ – Կգան, ախպեր ջան, կգան: Էն օրը գիտե՞ս ում եմ տեսել քաղաքում: Ուստա Հայրոյի Գառնիկին:

ԼԵՎՈՆ – Դարբին Հայրոյի՞ :

ՍԵԿՈՅԱՆ – Հա: Սկսեց հարցուփորձ անել... ինչ կա, ինչ չկա... Ու մեկ էլ թե՛՝ Սուրեն, որ գամ իմ ընտանիքով, հողամաս կտա՞ս տուն սարքեմ: Ասում է՝ մեր գյուղից մի քանի հոգի էլ կան, որ ուզում են հետ գալ, բայց ամաչում են: Որ գան կընդունե՞ս:

ԼԵՎՈՆ – Հետո՞ :

ՍԵԿՈՅԱՆ – Ասացի՛ եկեք խոսենք: Ի՞նչ պետք է ասեի:

ԼԵՎՈՆ – Չեն գա:

ՍԵԿՈՅԱՆ – Կգան, ախպեր ջան, կգան... Հիմա կարևորն այն է, որ գնացողներ չկան: Իսկ որ գնացողներ չլինեն, եկողներ կլինեն: Հաստատ:

ԼԵՎՈՆ – Գնացողներ չլինեն... Խնդրեմ, էս ընկերն էլ եկել է մեկին տանելու:

ՍԵԿՈՅԱՆ – Ո՞վ է: Ո՞ւմ...

ԱՐԱՅԻԿ – Այ մարդ, կրա՞կն ընկանք՝ բարև տվեցինք: Ինձանից ի՞նչ եք ուզում:

ԼԵՎՈՆ – Նազիկին:

ՍԵԿՈՅԱՆ – Օղակավարուհի՞ ...

ԼԵՎՈՆ – Միասին են տեխնիկումն ավարտել: Այգեգործ է: Անունն էլ Արայիկ:



ՍԵԿՈՅԱՆ – Իսկ պե՞տ: Իսկ ինչո՞ւ ես մտածում, թե եկել է տանելու: Ինչպե՞տ պիտի տանի:  
Իր Տիգրան պապին էլ հո հետը չի՞ տանելու: Գուցե ընդհակառակը, եկել է, որ էստեղ  
մնա...

ԱՐԱՅԻԿ – Էստեղ մնամ ի՞նչ անեմ:

ՍԵԿՈՅԱՆ – Ինչպես թե ինչ անեք: Այգեգործ չե՞ք: Թե՞ կարգին չեն սովորեցրել:

ԱՐԱՅԻԿ – Շատ լավ էլ սովորել եմ: Այգեգործություն սովորե՞լն ինչ դժվար բան է:

ԼԵՎՈՆ – Հա դե այգին ուր, տեխնիկումն ուր: Հաստատ գիտեմ, որ օրինակ կարող ես ասել, թե  
էս փոքրիկ ծառը, այ սա, մյուս տարի ինչքան խնձոր կտա:

ԱՐԱՅԻԿ – Ինչքա՞ն... Դե եթե լավ ջրվի, էտվի, ժամանակին սրսկվի... երևի մի հարյուր կիլո  
կտա:

ԼԵՎՈՆ – Ի՞նչ:

ԱՐԱՅԻԿ – Խնձոր, ի՞նչ:

ԼԵՎՈՆ – Խնձո՞ր: Չի տա:

ԱՐԱՅԻԿ – Ինչո՞ւ:

ԼԵՎՈՆ – Որովհետև դա տանձի ծառ է:

*(Սեկոյանը ծիծաղում է, ծիծաղում է նաև Լևոնը)*

ԱՐԱՅԻԿ - *(Շփոթված)* Հա, բայց դուք ասացիք խնձոր:

ԼԵՎՈՆ – Իսկ դու ծառերն իրարից չես տարբերում, հա՞, այգեգործ...

*(Ներս է ընկնում Աստղիկը)*

ԱՍՏՂԻԿ – Բարև ձեզ, ընկեր Սեկոյան, հայրիկ, մեր շարքը պրծանք... Գնա՞նք տատիկներին  
օգնության:

ԼԵՎՈՆ – Էս ո՞ր մեկն է, ո՞ր մեկն է:

ԱՍՏՂԻԿ – Աստղիկն եմ, հայրիկ:

ԼԵՎՈՆ – Հո չես խաբում, այ աղջիկ, ոնց որ Սաթիկը լինես:

ԱՍՏՂԻԿ – Է՛, լավ էլի, հայրիկ, ուշանում եմ, ասա...

ԼԵՎՈՆ – Չէ, Աստղիկ ջան, տատիկներին մի խանգարեք: Կվիրավորվեն: Դուք իջեք  
բարդիների կողմը:

ԱՐԱՅԻԿ - *(Աստղիկին)* Աչիկ ջան, Նազիկին գտիր ու ասա...

ԼԵՎՈՆ – Չի գտնի, չի գտնի, բոլորովին ուրիշ տեղում է... գնա, գնա, աղջիկս...

*(Աստղիկը հեռանում է)*

ՍԵՎՈՅԱՆ – Քո ընտանիքն էլ որ չլիներ, կորած էինք, Լևոն:

ԼԵՎՈՆ – Իսկ ինչի՞ պետք է չլիներ, ընկեր Սեկոյան...

ՍԵՎՈՅԱՆ – Քաղաքի կողմը չե՞ն նայում:

ԼԵՎՈՆ – Ինչի՞ չեն նայում: Նայում են, գնում են, ման են գալիս ու ետ դառնում: Հիմա ի՞նչ ես ասում, Արայիկ, եթե Նազիկին գտնեմ ու իմ կողմից էլ քո մասին մի երկու բարի խոսք ասեմ՝ կմնա՞ս:

ԱՐԱՅԻԿ - *(Կամացուկ)* Փորձանք է այս մարդը: Ես քաղաքացի տղա եմ, գյուղում մնամ ի՞նչ անեմ:

ՍԵՎՈՅԱՆ – Իսկ քաղաքում ի՞նչ ես անում: Աշխատո՞ւմ ես:

ԱՐԱՅԻԿ – Դեռ չէ:

ԼԵՎՈՆ – Իսկ որտե՞ղ ես աշխատելու: Այգեգործ ես, չէ՞...

ԱՐԱՅԻԿ – Տեսնենք, երևի Կոմայզում:

ՍԵՎՈՅԱՆ – Իսկ ինչո՞ւ գյուղում չես ուզում աշխատել:

ԱՐԱՅԻԿ – Ինչու... Հեռու է:

ԼԵՎՈՆ – Շուտ-շուտ ես օպերա գնո՞ւմ:

ԱՐԱՅԻԿ – Օպերա՞, չէ մի...

ԼԵՎՈՆ – Տո բա ուրեմն ինչի՞ց է հեռու: Դե ասա տեսնեմ, մեր գյուղն էդ ինչի՞ց է հեռու: Չես աշխատում, որ ասեմ, թե աշխատանքիդ տեղից է հեռու: Օպերա չես գնում, որ ասեմ, թե օպերայից է հեռու: Մեր գյուղն ինչի՞ց է հեռու, այ տղա: Կինո ես ուզում, ամեն օր ցույց են տալիս, պարել ես ուզում՝ իրիկունը էն բանում... էն... անունն ի՞նչ է, է, ընկեր Սեկոյան:

ՍԵՎՈՅԱՆ - *(Ծիծաղելով)* Դիսկոտեկ...

ԼԵՎՈՆ – Հա, էդ բանում պարի ինչքան ուզում ես, եթե ոտքերիդ մեջ հալ մնա...

ԱՐԱՅԻԿ – Հա, հա, հա, դիսկոտեկ էլ ունեք...

ՍԵՎՈՅԱՆ – Ունենք, իհարկե, իմիջիայլոց, Նազիկն էլ աշխատեցնում է:

ԼԵՎՈՆ – Գազը տների մեջ, ջուրը տների մեջ, ռադիոն ու հեռուստացույցը տների մեջ, բաղնիքը տների մեջ, փողոցներն ասֆալտ... Քո էդ ֆիատով ինչքա՞ն ժամանակում ես էստեղ հասել:

ԱՐԱՅԻԿ – Մի ժամում:

ԼԵՎՈՆ – Իսկ պիկ ժամերին մի ժամում կարո՞ղ ես քաղաքի մի ծայրից մյուսը հասնել: Ուրեմն ինչի՞ց է հեռու, այ տղա...

*(Ներս է ընկնում Նազիկը)*

ՆԱԶԻԿ – Ընկեր Սեկոյան, ես այսպես աշխատել չեմ կարող: Աշտոը չի սպասում, որ տեսակավորենք միրգը, խառնիխուռն լցնում է: Ասում եմ ինչո՞ւ ես մեր մի գործը երկու դարձնում, էլի մենք ենք հետո անելու, չէ՞: Ասում է էդպես է կարգադրված: Ասում եմ չէր կարող այդպիսի հիմար կարգադրություն լինել, ասում է...

ՍԵԿՈՅԱՆ - *(Օրծաղելով)* Կարող է, կարող է, ես եմ կարգադրել, որովհետև ժամանակ չկա, միրգը թափվում է, Նազիկ:

ՆԱԶԻԿ – Մխալ է, ընկեր Սեկոյան, բոլոր դեպքերում սխալ է... Հետո մինչև տեսակավորենք, մինչև... Առողջ միրգը որ հոտած մրգի կողքին դրեցինք, ինքն էլ կհոտի, չէ... *(Նկատում է Արայիկին)* Արայի կ... Արայի կ, դո՞ւ այստեղ ինչ ես անում:

ԱՐԱՅԻԿ – Եկա... Ուզում էի քեզ տեսնել... Տեղդ չգիտեի... Էս մարդն էլ այնպես է թաքցնում քո տեղը, ասես թե ռազմական գործարանում ես աշխատում:

ՆԱԶԻԿ – Ընկեր բրիգադիրը՞, ինչո՞ւ...

ԼԵՎՈՆ – Դե... տեսակավորման առումով, Նազիկ... Եթե իրար կողք դնենք առողջ միրգն ու...

ՆԱԶԻԿ – Ա՛խ, մեր անբախտ Արայիկ, ա՛խ, հասցրել ես էստե՞ղ էլ հակառակ տպավորություն թողնել, հա՛:

ԱՐԱՅԻԿ – Իսկ ես ի՞նչ եմ արել... Նազիկ:

ՆԱԶԻԿ – Դու փրկություն չունես, Արայիկ... Ախր ընկեր Սեկոյան, ամբողջ կուրսով փախչում էինք: Բայց մենակ Արայիկին էին բռնում ու պատժում: Արայիկից արտագրում էին բոլորը, բայց ամենացածր գնահատականը հենց Արայիկին էին դնում: Արի, արի, մեր անբախտ Արայիկ:

ԱՐԱՅԻԿ – Նազիկ... ո՞ւր... Ես քեզ բան ունեմ ասելու...

ՆԱԶԻԿ – Արի, արի, հո մտադիր չե՞ս հասարակության առջև հայտարարությամբ հանդես գալ: Արի, արի...

ԱՐԱՅԻԿ – Ո՞ւր...

ՆԱԶԻԿ – Այգի, ո՞ր, քո տեղը այգին է...

ԱՐԱՅԻԿ – Իսկ դու էստեղ, ասում են, դիսկոտեկայից դուրս չես գալիս, հա՞...

ՆԱԶԻԿ – Ուրեմն բրիգադիրն այնուամենայնիվ քեզ ռազմական գաղտնիքներ է հայտնել...  
բացբերանը... Արի...

ԱՐԱՅԻԿ – Քեզ էստեղ ինչպես երևում է շատ լավ ես զգում...

ՆԱԶԻԿ – Արի, արի, դու էլ լավ կզգաս... Ընկեր Սեկոյան, ուրեմն տեսակավորում ենք տեղում:

ՄԵԿՈՅԱՆ – Լավ, լավ...

*(Դուրս են գնում)*

ԼԵՎՈՆ – Չէ, դա Նազիկին տանողը չէ:

ՄԵԿՈՅԱՆ - *(Օրհնադու՛ է)* Ավելի շուտ հակառակը...

ԼԵՎՈՆ – Հո չնեղացաք, ընկեր Սեկոյան, որ այդ Արայիկին մի քիչ նեղը զցեցի գյուղ գալու հարցում: Սկզբում շատ ջղայնացա:

ՄԵԿՈՅԱՆ – Չէ, Լևոն, ընդհակառակը, ես շատ ավստացի, որ ինքս էլ իրավունք չունեմ այդպես խոսելու:

ԼԵՎՈՆ – Ինչո՞ւ...

ՄԵԿՈՅԱՆ – Որովհետև չեմ կարողանում Գոհարին համոզել, որ շրջկենտրոնը թողնի ու տղայիս հետ գյուղ գա:

ԼԵՎՈՆ – Դե ձերն ուրիշ է, ընկեր Սեկոյան, Գոհարը երաժշտական դպրոցում դաս է տալիս, գա էստեղ ի՞նչ անի:

ՄԵԿՈՅԱՆ – Ամեն մարդ մի պատճառաբանություն ունի: Եվ եթե ես չեմ կարողանում գյուղ բերել նրան, ո՞ր իրավունքով նույնը պահանջեմ ուրիշներից: Ո՞ր իրավունքով արգելեմ, որ մարդիկ հեռանան գյուղից: Այս գյուղում, փաստորեն, այդ իրավունքը միայն դու ունես, Լևոն: Մենակ դու: Դու իսկական քաղաքացի ես և հայր, դու ծնողի դասագրքային օրինակ ես, ախպերս...

*(Ներս է մտել Ժենյան: Լսել է վերջին խոսքերը)*

ԺԵՆՅԱ – Միանգամայն իրավացի է ընկեր Սեկոյանը:

ՄԵԿՈՅԱՆ – Ընկեր Ժենյա... Դուք է՞լ եք այստեղ... Ես ասացի, որ չանհանգստացնեն

ձեզ:

ԺԵՆՅԱ – Ինչո՞ւ: Ես ումի՞ց եմ պակաս: Արդեն քսան արկղ դեղձ եմ հավաքել: Թեև ճիշտն ասած, հենց շրջվում էի, անպիտան երեխաներն իսկույն լցնում էին իմ արկղերը:

ԼԵՎՈՆ – Կեցցեք, ընկեր Ժենյա...

ԺԵՆՅԱ – Դուք ավելի կեցցեք, սիրելի Լևոն, և՛ որպես բրիգադիր, և՛ որպես հայր... Ընկեր Սեկոյանը ճիշտ էր ասում, դուք ծնողի մի զարմանալի օրինակ եք: Եվ շնորհավորում եմ, պարզվում է, որ դուք մի տղա էլ եք ունեցել:

ԼԵՎՈՆ – Ե՞ս... *(ծիծաղում է)*

ԺԵՆՅԱ – Այո, այո, ձեր զավակների թիվը հասավ տասնմեկի, սիրելի Լևոն:

ԼԵՎՈՆ – *(Սեկոյանին, մեկուսի)* Խեղճ կնիկը լրիվ ձեռքից գնացել է: *(Բարձր)* Շփոթում եք, ընկեր Ժենյա, ինձ նոր երեխա ո՞րտեղից: Հրեն, Վարսենիկը դեղձ է քաղում երեխաների հետ:

ԺԵՆՅԱ – Վարսենիկը դեռ չգիտի, Լևոն...

ՍԵԿՈՅԱՆ – *(Շիծաղում է)* Ներողություն, ընկեր Ժենյա, բայց առանց Վարսենիկի այդ հարցն ինչպե՞ս կլինի...

ԺԵՆՅԱ – Լինում է, լինում է, տղաներ...

## **ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ**

*(Հեռախոսակայանը: Եվան և Կամոն: Կամոն զարմանալիորեն Լևոնի նման տղա է: Ժպտուն, պայծառ դեմք ունի)*

ԵՎԱ – Ուրեմն, հայերեն հասկանում ե՞ս, տղա ջան:

ԿԱՄՈ – Այո, փոքրիկ, փոքրիկ գիտենալ:

ԵՎԱ – Բա ումի՞ց ես սովորել, մորի՞ցդ...

ԿԱՄՈ – Այո՞ ... Ոչ, մայրիկ լեհ, մայրիկ Յադվիգա... Իմ... սովորել բառարան...

ԵՎԱ – Վա՛յ, հողը մեր գլխին... Սովորել ես, որ գաս տեսնե՞ս հորդ...

ԿԱՄՈ – Այո՞ ... Տեսնել... Մայրիկ ուզենալ տեսնել...

ԵՎԱ – Մայրիկդ էր ուզում տեսնել, հա՞ ... բա ինչո՞ւ չեկավ:

ԿԱՄՈ – Այո՞ ... Ո՞վ...

ԵՎԱ – Մայրիկդ, մերդ, մերդ...

ԿԱՄՈ - *(Հասաչում է)* Մայրիկ չկա... Մեկ... երկու տարի... չկա... *(խաչակնքում է)* Մայրիկ... երկինք...

ԵՎԱ – Վայ քոռանամ ես, հայ քրիստոնյա է... Ուրեմն, որք ես, հա՞, արևիդ մեռնեմ: Երևի սոված ես, հա՞, ցավդ տանեմ: Ես էլ փոխանակ քեզ հաց տամ, գլուխդ տանում եմ: Բա ի՞նչ տամ, արևիդ մատաղ... Հաց ու պանիր կուտե՞ս... Թեկ պանիր է... Հա, մի հատ էլ պոմիդոր կա... Ի՞նչ անեմ, ուրիշ բան չունեմ...

*(Ինչ-որ տեղից հանում, արագ-արագ սեղանին է դնում)*

Կեր, ցավդ տանեմ, կեր, տղա ջան... Մինչև տեսնենք ինչ է լինում...

ԿԱՄՈ – Այո... ոչ, ոչ... ուտել՝ ոչ...

ԵՎԱ – Ձեր ցավը տանեմ, ես ոնց էլ խոսում ա, է՛... Սոված չես, հա՞... Դե դեղձ կեր, դեղձ... Մեր այգիներից է, տղա ջան... Քո հերն ու մերն էստեղ են... այսինքն՝ հերդ... Պապան, պապան... դեղձ... քաղել *(ձեռքերով ցույց է տալիս)*:

ԿԱՄՈ – Հայրի՞կ...

ԵՎԱ – Վայ, հողն իմ գլխին, ինձ հայերեն է սովորեցնում: Հա, հա, հայրիկ...

*(Դուռը բացվում է, հուզված ներս են մտնում Լևոնն ու Սեկոյանը)*

Ահա, սա էլ քո հայրիկը...

*(Հայր ու որդի կանգնել, իրար են նայում: Չգիտեն ինչ անել):*

ՄԵԿՈՅԱՆ – Դոբրո պոժալովատ...

ԵՎԱ – Այ մարդ, հո քար չես, մոտիկ գնա, բարև տուր... Քեզ վկա է պե՞տք, չե՞ս տեսնում, որ իսկը քո պատկերն է:

ԼԵՎՈՆ – Սպասիր, Եվուկ, սպասիր... Ես չեմ իմանում ինչ անեմ...

ԿԱՄՈ – Բարև ձեզ... Մի... Իմ... էլի գնալ Պոլոնիա... Ուզել տեսնել ձեզ... Մայրիկ ասել... տեսնել...

ՄԵԿՈՅԱՆ – Հայերեն է խոսո՞ւմ...

ԵՎԱ - *(Համարյա լաց լինելով)* Բա... քեզ համար է սովորել, որ գա հետդ խոսի, իսկ դու կանգնել մնացել ես կոճղի նման... Մոտիկ գնա, այ տղա...

ԼԵՎՈՆ – Սպասիր, սպասիր, Եվուկ... Ուրեմն դու Յադվիգայի տղան ե՞ս:

ԿԱՄՈ – Այո՞ ... այո, Յադվիգա... մայրիկ...

*(Գրպանից հանում է անձնագիրը):*

Եվ... գրված ... Լևոն... Հայրիկ

ՍԵԿՈՅԱՆ - *(Սկամա վերցնում է անձնագիրը, նայում է)*

Կամ Լևոնի Կամինսկի... Խելագարվել կարելի է:

ԵՎԱ - *(Լաց լինելով)* Հա, հա, ցավդ տանեմ, ոնց որ հնդկական կինո լինի...

*(Լևոնին)* Մոտիկ գնա, այ խիղճդ կտրվի, մի երկու խոսք ասա... Մերը մեռել է երկու տարի առաջ, սիրտն առ...

ԼԵՎՈՆ – Յադվիգան չկա՞ :

ԿԱՄՈ - *(Խաչակնքում է)* Չկա... մայրիկ...

ՍԵԿՈՅԱՆ - *(Չգիտե ինչ ասել)* Նստեք, նստեք...

*(Ներս է մտնում Մաթենիկը)*

ՍԱԹԵՆԻԿ – Բարև ձեզ, մի հաս Երևան միացրու, Եվուկ...

ԵՎԱ – Նստի, նստի, դրա ժամանակը չի... Հեռախոսն անջատել եմ...

*(կամացուկ)*

Լևոնի տղան է, Լեհաստանից... Տղա ջան, բա անունդ ո՞վ է Կամո դրել...

ԿԱՄՈ – Մայրիկ Յադվիգա... Մահանալ առաջ ինձ ամեն ինչ պատմել: Ստիպել տեսնել Հայաստան... Ասել՝ դու հայ ես, հայ ես, Կամո...

ՍԱԹԵՆԻԿ – Այ ձեր ցավը տանեմ, էս ի՞նչ պատմությունն է...

ՍԵԿՈՅԱՆ – Հը, Լևոն...

ԼԵՎՈՆ – Դե ինչ ասեմ... Լեհաստանում էի ծառայում... Յադվիգան մեր գնդի կողքին էր ապրում: Սիրում էինք իրար: Ես շատ էի սիրում... նրան... Հետո ինձ Գերմանիա տեղափոխեցին... Հետո ... շատ գրեցի, խնդրեցի, որ Հայաստան գար... Ինչ արեցի, չեկավ... Ծեր ծնողներ ուներ, չէր ուզում մենակ թողնել... Իսկ էս էլ՝ ո՞նց գնայի... Ե՞ս ում թողնեի մերոնց...

*(Ներս է մտնում Ժենյան, Աշոտի հետ, լուռ տեղավորվում են)*

ՍԱԹԵՆԻԿ – Իսկ երեխայի մասին գիտեի՞ր, Լևոն... Ի՞նչ էլ տղա է, դարդդ տանեմ...

ԼԵՎՈՆ – Ոչինչ, ոչ մի բան... Քանի տարի նամակ ենք գրել իրար... Ոչ մի խոսք...

ՍԵԿՈՅԱՆ – Երևի չի ուզեցել, որ երեխան լինի ստիպող պատճառը, ո՞վ գիտե...

ԵՎԱ – Բա անունն ինչի՞ է Կամո դրել, անունը...

*(Կամոյին)*

Քո անունն ինչի՞ է Կամո... ձեր էդ լեհերի մեջ Կամո կա՞...

ՍԵԿՈՅԱՆ – Չէ, ինչ ես ասում, Եվա...

ԿԱՄՈ – Այո՞... Չեմ իմանալ... Ոչ, ոչ, Պոլոնիա Կամո ոչ...

*(Ներսե և մտնում Նազիկը, Աստղիկը և Արայիկը: Զարմանում են՝ այդքան մարդ տեսնելով)*

ՆԱԶԻԿ – Եվա տատ, Երևանի գիծը... Վա՞յ...

ԱՍՏՂԻԿ – Ես էլ ասում եմ որտե՞ղ են մերոնք...

ԺԵՆՅԱ – Հանդարտ, հանդարտ...

ԵՎԱ – Ըհը, էս էլ քույրը... Հիմի տեսնես արյունը կքաջի՞...

ԿԱՄՈ – Այո... միայն իմ Կամո...

ԱՍՏՂԻԿ – *(Շվարած)* Էդ ո՞վ է...

ՍԱԹԵՆԻԿ – Քո ախպերն է, բալա ջան...

ԱՍՏՂԻԿ – Վա՞յ, ի՞նչ ես ասում, է՛, այ տատ...

ԵՎԱ – Սուս, ասում եմ, նստեք, նստեք...

ԼԵՎՈՆ – Մի օր մեր ակումբում կինո էինք նայում միասին: Պատահաբար՝ Կամոյի մասին էր: Ես Յադվիգային ասացի՝ այ թե ովքեր են հայերը: Կամոն հայ է, ասացի: Ինձ նման հայ: Հանկարծ ծիծաղեց ու ասաց. «Եթե տղա ունենամ, անունը Կամո եմ դնելու»: Ո՞ւմ մտքով կանցներ... Կարծեցի կատակում է, էդ ամբողջ օրը Կամո էինք ասում ու ծիծաղում էինք...

ԵՎԱ – Դե էդ ա, էլի, ի՞նչ ես կողքերը ման գալիս...

ՍԱԹԵՆԻԿ – Ձեր ցավը տանեմ, ոնց որ հեքիաթ լինի...

ՍԵԿՈՅԱՆ – Լավ: Եկեք պարզություն մտցնենք: Արդեն ամբողջ գյուղը հավաքվեց: Հիմա ի՞նչ ես անելու, Լևոն...

ԼԵՎՈՆ – Ի՞նչ պետք է անեմ: Ասում եմ...



ԺԵՆՅԱ – Իմ կարծիքով, ճիշտն այն կլինի, եթե երեխան այս գիշեր մեր տանը մնա, մինչև տեսնենք, թե ինչ մտադրություններ ունի: Եվ ընդհանրապես...

ՍԵԿՈՅԱՆ – Կամո եղբայր, ի՞նչ ես որոշել... Ուզում ես այստե՞ղ մնալ, Հայաստանում...

ԿԱՄՈ – Այո՞... Ոչ, ոչ... Իմ... տեսնել Հայաստան... տեսնել հայրիկ... Ու նորից գնալ... Ես կատարել մայրիկի խոսք... Ու գնալ...

ԱՇՈՏ – Ո՞նց թե, ո՞ր ես գնում, դու հայ ես, չե՞՞... հայ ես, չե՞՞...

ՍԱԹԵՆԻԿ – *(Լևոնին)* Այ տղա, մի խոսք ասա, սիրտս ճաքում է...

ԵՎԱ – Ձեր ցավը տանեմ... թողեք ես ասեմ... Լևոնի համար դժվար է, հազար հարց կա, Վարսենիկ կա... Թողեք ես տղին մեր տուն տանեմ: Ես մենակ մարդ եմ: Տունն էլ երեխի կարոտ: Վարդանն էլ համաձայն կլինի, հաստատ... Վերջին նամակն ախր հենց Լեհաստանից եմ ստացել: Կոշիցե քաղաքից: Տղա ջան, Կամո ջան, ձեր երկրում Կոշիցե քաղաք կա՞... Կոշիցե...

ԿԱՄՈ – Կոշիցե... մեր հարևան քաղաք... Իմ այնտեղ սովորել...

ԵՎԱ – Տեսնո՞ւմ եք, ուրեմն մեր տուն պիտի գա...

ՍԱԹԵՆԻԿ – Խոսում ես, էլի... Հերը գլխին դու ձեր տուն ես տանելու...

ԱՍՏԴԻԿ – Էս ի՞նչ են խոսում, ի՞նչ են ասում...

*(Դուրս է վազում)*

ՍԵԿՈՅԱՆ – Կամո, գուցե իսկապես մնաս, հա՞... Տեսնո՞ւմ ես, բոլորն ուզում են, որ դու մեր գյուղում մնաս...

ԿԱՄՈ – Այո՞... Ոչ, ոչ, իմ շնորհակալ լինել... շատ... մեծ Բայց ոչ կարող...

ԺԵՆՅԱ – Գոնե ժամանակավոր, տղաս, գոնե ժամանակավոր... Ծանոթացիր քո հայրենիքին... Այնպես է ստացվել, որ Հայաստանը քո հայրենիքն է, հասկանո՞ւմ ես...

ԱՐԱՅԻԿ – Նամանավանդ որ հիմա Լեհաստանում խառն է վիճակը... Մի քիչ մնա, մինչև խաղաղվի ամեն ինչ, նոր կգնաս, էլի...

ԿԱՄՈ – *(Ծիծաղում է)* Այո՞... Ոչ, հիմա ոչ խառ... հիմա ամեն ինչ հանգիստ, ամեն ինչ լավ...

ՍԱԹԵՆԻԿ – Վայ, զարմանալի տղա ես, հո չե՞ս եկել, մի անգամ ասես «բարև, հայրիկ» ու գնաս...

ԱՇՈՏ – Գուցե ուրիշ քույր-եղբայր ունես, հա՞... Քույր, եղբայր...

ԿԱՄՈ – Օ՛, ոչ, ոչ, ես... մենակ...

ԱՇՈՏ – Մենա՞կ: Ընկեր Լևոն, էդ հեչ քեզնից չէր...

*(Բոլորը ծիծաղում են: Ջերմանում է մթնոլորտը)*

ՍԵԿՈՅԱՆ – Իսկ դու գիտե՞ս, որ տասը քույր-եղբայր ունես, Կամո...

ԿԱՄՈ – Այո՞ ... Որքա՞ն...

ՍԵԿՈՅԱՆ – Տասը... զույգ-զույգ, վեց եղբայր, չորս քույր...

ԿԱՄՈ – Ամ... Ոչ հասկանալ...

ԱՇՈՏ – Ո՞վ է հասկանում, որ դու հասկանաս, ցավդ տանեմ...

ԵՎԱ – Ընկեր Սեկոյան, ուրեմն որոշեցինք, առայժմ տանում եմ մեր տուն...

ՍԱԹԵՆԻԿ – Ինչի՞, մեր տա՞նն ինչ է եղել...

ԵՎԱ – Դու քո Սամվելին ու Մանվելին բեր...

ՍԱԹԵՆԻԿ – Էլի սկսեց...

ԺԵՆՅԱ – Սուրեն, սիրելիս, իսկապես, մի՞ թե ամենահարմարը առայժմ մեր տունը չէ...

ՍԵԿՈՅԱՆ – Չգիտեմ էլ թե ինչ ասեմ... Իհարկե, այստեղ վճռողը Լևոնն է...

*(Ներս է մտել Վարսենիկը Աստղիկի հետ, լսել է վերջին խոսքերը: Նայում է շուրջը, նայում է Լևոնին՝ խստությամբ)*

ՎԱՐՍԵՆԻԿ – Լևո՞ն... Էս ի՞նչ ժողով ես հավաքել... Ընդհանուր ժողովն է որոշելու՞, թե որտեղ պիտի ապրի քո տղան... Մեր տղան... Կամ դո՞ւք ինչ եք իրար խառնվել... Էդ տղեն անտեր է՞: Տուն չունի՞: *(Մոտենում է Կամոյին, մեկնում է ձեռքը)* Արի, տղա ջան, արի գնանք քո տունը: Արի գնանք քո քույրերի, եղբայրների մոտ: Արի, բալես...

*(Կամոն բռնում է Վարսենիկի ձեռքը ու հանկարծ միանգամից թեքվում, համբուրում է այդ ձեռքը):*

## **ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ**

*(Պատշգամբ: Եվան ինչ-որ գործ է անում: Ներս են մտնում Աստղիկն ու Գագիկը)*

ԳԱԳԻԿ – Եվա տատ, մարզը փորեցինք: Էլ ի՞նչ կա անելու:

ԱՍՏԴԻԿ – Մենք էլ լոբին հավաքեցինք, պրծանք: Հիմա տունը սրբե՞մ, տատ:

ԵՎԱ – Չէ, բալա ջան, տանն ի՞նչ կա, որ սրբես... Սրբված-պրծած է: Էլ ոչ մի բան, հիմա ձեն ես տալիս բոլորին, տուն եք գալիս, մի կտոր հաց ենք ուտում... ու նոր գնում եք, այ իմ աշխատավոր բալաներ...

ԳԱԳԻԿ – Չէ, չէ, Եվա տատ, եթե գործ չկա, մենք թռանք... Ակումբում կլինո կա:

ԵՎԱ – Բա եղպես ո՞նց կլինի... ամբողջ օրն այգիներում էիք, հիմի էլ մեր տանը... Սոված կկոտորվեք, այ երեխեք...

ԱՍՏԴԻԿ – Մինչև կլիրակի, տատ...

*(Եվան շրջվում, տուն է մտնում: Եվայի տունը: Գյուղական սովորական տուն՝ մեծ սենյակով, թախտով ու գորգերով: Պատուհանի գոգին անթառամի փունջ է: Պատերից ցորենի ցողունների հյուսեր են կախված: Իրիկուն է, կիսամութ: Ներս է մտնում Եվան, սկուտեղի վրա երկու բաժակ թեյ: Դնում է սեղանին:*

*Ետ է դառնում, վառում է լույսը: Սեղանի մոտ նստած է կարճ խուզած մազերովի պատանի՝ զինվորական շորեր հագած: Կողքին, թախտի վրա, զինվորական ամառային գլխարկն է:)*

ԵՎԱ – *(Սովորականի պես)* Եկա՞ր, Վարդան ջան...

ՎԱՐԴԱՆ – Հա... Դու ասացիր, որ գամ, չէ՞, Եվուկ...

ԵՎԱ – Հա, Վարդան ջան, ես ասացի: Քանի ես կամ, դու պիտի գաս, դու ինձ մենակ չես թողնելու, չէ:

ՎԱՐԴԱՆ – Չեմ թողնի, Եվուկ ջան...

ԵՎԱ – Հիշո՞ւմ ես, դու ասացիր երդվենք, որ ամբողջ կյանքում միասին ենք լինելու:

ՎԱՐԴԱՆ – Հիշում եմ...

ԵՎԱ – Դու ասացիր, ես քեզ սիրում եմ, Եվա, ես աշխարհում ամենից շատ քեզ եմ սիրում... Հիշո՞ւմ ես:

ՎԱՐԴԱՆ – Ես հիմա էլ ամենից շատ քեզ եմ սիրում, Եվա...

ԵՎԱ – *(Մի տեսակ ամաչելով)* Մի ասա, մի ասա, ես հիմա ի՞նչ սիրելու բան եմ, Վարդան ջան: Դու գիտե՞ս, որ մի ժամանակ չէի ուզում ապրել, չէի ուզում մեծանալ, որպեսզի դու չտեսնեիր իմ կնճիռները, իմ ծերանալը: Վախենում էի տեսնես, հիասթափվես ու էլ չգաս... Ախր դու միշտ ջահել, միշտ սիրուն ես մնում, իսկ ես ավերակ եմ արդեն...

ՎԱՐԴԱՆ – Դո՞ւ... դու աշխարհի ամենաչքնաղ աղջիկն ես, Եվա... *(Մոտենում, շոյում է նրա գլուխը)*: Ես քեզ սիրում եմ, Եվա... Դու քեզ մի բամբասիր: Ո՞վ ունի քո աչքերը, ո՞վ ունի քո հպարտ ճակատը, ո՞վ քո քնքուշ մազերն ունի, Եվա...

ԵՎԱ – Տե՛ր աստված, միթե նա ոչինչ չի տեսնում...

ՎԱՐԴԱՆ – Երբ որ դու դուրս էիր գալիս տնից, ինձ թվում էր, թե արևը դուրս եկավ: Ես խանդում էի մեր գյուղի բոլոր տղաներին, որ նրանք էլ կարող են տեսնել քեզ: Երբ պատերազմ էի գնում, իմ միակ ցավն այն էր, որ չեմ տեսնելու քեզ, սիրելիս...

ԵՎԱ – Հա... դու հենց այդպես էլ ասացիր էն սև օրը ու խաբեցիր ինձ:

ՎԱՐԴԱՆ – Ե՞ս... ես քեզ ինչո՞վ եմ խաբել...

ԵՎԱ – Դու ասացիր՝ որտեղ էլ լինեմ, ինչ վիճակի մեջ էլ լինեմ, ինձ պահելու եմ քեզ համար, Եվա... Դու ասացիր՝ սպասիր ինձ, ասացիր ինչ էլ որ պատմեն իմ մասին՝ չհավատաս, ասացիր՝ եթե սև թուղթս էլ քո աչքով կարդաս, չհավատաս, Եվա, որովհետև ես քեզ այնքան եմ սիրում, որ մեռնելու իրավունք չունեմ...

ՎԱՐԴԱՆ – Ի՞նչ անեմ... Ես հո չէի ուզում, որ այդպես լինեիր, չստացվեց, Եվա... ներիր ինձ...

ԵՎԱ – Ինչո՞ւ, ինչո՞ւ... ինչո՞ւ ուրիշները կարողացան... Ինչո՞ւ ուրիշները եկան, իսկ դու... Ուրեմն դու ինձ այնքան չէիր սիրում, որքան ասում էիր...

ՎԱՐԴԱՆ – Ես քեզ այնքան էի սիրում, որ ուրիշ կերպ վարվել չէի կարող... Ես հո չէի կարող այնպիսի մի բան անել, որ դու ամաչեիր ինձ համար...

ԵՎԱ – Բայց հո ողջ կլինեիր, իմ կողքին կլինեիր, ինձ հետ կլինեիր...

ՎԱՐԴԱՆ – Ես իրավունք չէի ունենա, որ դու ինձ սիրեիր, Եվա... Հասկացիր ինձ...

ԵՎԱ – Չեմ ուզում հասկանալ, չեմ հասկանում... Դու միշտ էլ ուրիշ ես եղել... դու բոլորի մասին մտածել ես, իսկ քո մասին երբեք... Դու հո կարող էիր բանակ չգնալ, քեզ պահում էին... Իսկ դու գնացիր կամավոր...

ՎԱՐԴԱՆ – Ես կարծում էի, որ եթե շուտ գնամ, շուտ կավարտվի պատերազմը ու ես շուտ կվերադառնամ քեզ մոտ:

ԵՎԱ – Իսկ մի՞թե չէիր կարող գերի ընկնել... Քանի-քանիսն ընկան... ու ետ եկան, ի՞նչ եղավ, Վարդան ջան... Բա էս լեն ու բոլ աշխարհի մեջ մի տեղ չկա՞ր, որ դու գլուխդ թաքցնեիր...

ՎԱՐԴԱՆ – Ես կարող եմ ճիշտն ասել... Բայց դու հուզվում ես, Եվա ջան... Իսկ ես չեմ ուզում, որ զուր տեղը տանջվես:

ԵՎԱ – Ձուր տեղը...

ՎԱՐԴԱՆ – Մեր գյուղի Սերոբը ճիշտն է ասել քեզ: Հա, ես կարող էի այդ օրը որևէ կերպ պրծնել: Ինձ ոչ ոք չէր նկատել, գերմանացիները իմ կողքով էին անցնում: Բայց եթե ես չմատնեի իմ տեղը, չկրակեի, մեր ամբողջ գունդը գերի կընկներ: Ամբողջ գունդը, Եվա ջան: Հինգ հարյուր հոգի... ինձ նման տղաներ:

ԵՎԱ – Քեզ նման... Քեզ նման տղան մենակ դու ես, մենակ դու էիր... Ախր ես ամբողջ աշխարհում մենակ դու էիր ինձ պետք... Ախր ես մեռնում էի քեզ համար, սպասում էի քեզ...

ՎԱՐԴԱՆ – Նրանց բոլորին էլ սպասում էին...

ԵՎԱ – Բա ես...

ՎԱՐԴԱՆ – Ներիր ինձ, Եվա... Ես հասկանում եմ քեզ... Բայց ես ուրիշ կերպ չէի կարող... Ներիր, որ այդքան տանջել եմ քեզ...

ԵՎԱ – Է՛հ... *(Լռություն)* Քեզ ասե՛լ եմ, որ դպրոցում երեխաները քո անունով ջոկատ ունեն:

ՎԱՐԴԱՆ – Ասել ես, Եվա...

ԵՎԱ – Որ նամակ են գրել Լեհաստան, Կոշիցե քաղաքը, որտեղից քո վերջին նամակը ստացա: Խնդրել են, որ այնտեղի երեխաները հետաքրքրվեն ու նոր տեղեկություններ ուղարկեն քո մասին...

ՎԱՐԴԱՆ – Ասել ես, սիրելիս, ասել ես...

ԵՎԱ – Իսկ էսօր գիտե՞ս ինչ պատահեց: Հենց նույն Լեհաստանից, նույն Կոշիցե քաղաքի մոտից մի տղա եկավ մեր գյուղը: Կամո է անունը: Պարզվեց, որ մեր Լևոնի տղան է, քսաներկու տարեկանում նոր իմացել է, որ հերը կա ու եկել է տեսնի: Հերն էլ տասը երեխա ունի... Ի՛նչ բախտ է, չէ՞ ...

ՎԱՐԴԱՆ – Բախտ է, իհարկե...

ԵՎԱ – Բա մարդ կա՝ մեռավ, չոր գլուխ, անտեր... Մարդ էլ կա՝ տունը կյանքով լիքը... Օրհնանքի նման՝ տասը որդով սեղան են նստում ու մեկ էլ կողքին ավելանում է տասնմեկերորդը...

ՎԱՐԴԱՆ – Դե, ես գնամ, Եվա ջան...

ԵՎԱ – Ինչի՞, ցավդ տանեմ, ինչի՞ ես գնում, ո՞ւր ես գնում... Մնա, էլի...

ՎԱՐԴԱՆ – Արդեն ուշ է... Համ էլ հոգնած ես, տանում է քունդ, աչքերդ փակվում են ... Քնիր, որ առավոտ շուտ աշխատանքի պիտի գնաս... Քնիր, քնիր...

ԵՎԱ – Բայց էլի կգաս, չէ՞, վաղն էլի կգաս, չէ՞ ...

*(Գլուխն իջեցնում է ձեռքերին)*

ՎԱՐԴԱՆ – Իհարկե, իհարկե, կգամ... Քանի դեռ հիշում ես ինձ, կգամ...

*(Մթնեցում)*

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*(Հեռախոսակայանը: Եվան տենդորեն աշխատում է: Անընդհատ վառվում է սարքի կարմիր լույսը ու գնգում է հեռախոսը)*

ԵՎԱ – Ալո՞, Գրետա՞, Գրետա ջան՞, գյուղվարչություն միացրու: Անգին, Անգին ջան, Հոնուտն է: Ընկեր Սեկոյանը այգիները գնաց: Ասաց, որ թվեր քեզ հաղորդեմ: Հա, գրի: Դեղձ՝ վեց հազար, խաղող՝ տասնութ հազար, խնձոր՝ ութ հազար չորս հարյուր, կարտոֆիլ՝ քառասուն հազար, կաթ՝ երկու հազար ութ հարյուր: Հա: Դե ապրես...

*(Զանգ)*

Ալո, Հոնուտն է: Սեկոյանն այգիներում է: Ի՞նչ: Ի՞նչ ավտո: Ավտոները բոլորն այգիներում են: Հա՞: Հա, էդ ուրիշ բան: Կասեմ, կասեմ, ընկեր Միտոյան...

*(Վազում, ցած է կախվում պատուհանից)*

Այ բալա, բալիկ ջան, ո՞ւմ երեխեն ես դու, անունդ ի՞նչ է... Հա, Սոկրատ ջան, վազի այգիների վրա ձեն տուր՝ Աշոտին ասա՝ նոր ավտո են տվել, թող քաղաք գնա: Հա, քեզ մատաղ...

*(Վազում է սարքի մոտ, վերցնում է լսափողը)*

Ալո՞, Հոնուտն է: Ի՞նչ, աչքիդ լույսով մնա: Իմաց կտամ: Տղա՞ է, թե աղջիկ: Այ շատ ապրես, նրանք էլ հենց աղջիկ էին ուզում: *(Միացնում է խոցը)* Ընկեր հաշվապահ, գնա թոռանդ դիմավորի... աղջիկ է, աղջիկ, մաղարիչը քեզ վրա... Դե ապրես...

*(Ցած է դնում ու նորից վերցնում լսափողը)*

Ալո՞, հա, Գրետա ջան, ես եմ... Երևա՞ն: Հա, միացրու: Ալո, ալո, ո՞վ, Սամվելը՞: Լսում եմ, Մանվել, խեր լինի, որ զանգ ես տալիս: Չե, էստեղ չի: Մի քիչ առաջ աչքովս ընկավ, ոնց որ տուն էր գնում: Մպասիր, սպասիր ձեն տամ... Չե՞, ի՞նչ հետո, մեկ էլ տեսար՝ չմիացավ: Մպասիր, փողը մերդ կտա, այ տղա...

*(Վազում է պատուհանի մոտ)*

Ալո՞ ... է՛հ, Սաթենիկ, հեյ Սաթենիկ... Քեզ հետ եմ... խռով եմ, բայց ճար չունեմ, պաշտոնական գործ է... Վազի, Մանվելդ է... հեռախոսի մոտ: *(Լսափողի մեջ)* Ալո, եկավ, վազում է խեղճ մերդ...

*(Հնիհն ներս է ընկնում Սաթենիկը)*

ՍԱԹԵՆՆԻԿ – Որտեղ է, որտեղ է...

ԵՎԱ – Առաջին խցիկը...

ՍԱԹԵՆՆԻԿ – Ո՞ւր է... Է՛հ, երանի հավեսիդ... Քոռանամ ես, տեսնես ինչ է պատահել, որ ինքն է զանգ տալիս: Մի օյին եկած չլինի : *(Վերցնում է լսափողը)* Ալո՞, Մանվե՞լ, ի՞նչ է պատահել: Մանվել ջան, չէ, մի խաբի, տղա ջան, դու ե՞րբ էիր զանգ տվել որ... Ի՞նչ, ե՞րբ, ցավդ տանեմ: Ես հիմի չեմ կարող, տղա ջան: Դո՞ւք: Դու և ո՞վ: Մամվելը՞ : Գալի՞ս եք: Կանանցով, երեխաներո՞վ: Լավ չեմ լսում: Հա՞, ուզում եք, որ սրանից հետո միասին լինե՞նք... *(Նայում է Եվային)* Բա իմ ուզածն էդ չի՞, արևիդ մատաղ, բա իմ մուրազն էդ չի՞ ... ձեր կյանքին մեռնեմ: Ես էլ ո՞վ ունեմ... Հա, ցավդ տանեմ, գիշերը չեմ քնելու, սպասելու եմ: Եկեք... *(Ցած է դնում լսափողը: Շրջվում է դեպի Եվան միանգամից ջահելացած ու երջանիկ)* Հը՞, որ ասում էի կգա՞ն: Որ ասում էի՝ հողը կքաշի ...

ԵՎԱ – Ի՞նչ էր ասում... Սաթո...

ՍԱԹԵՆՆԻԿ – Ասում էր, ընկեր Եվա, որ Մամվելի հետ վաղը գալիս են իմ տղերքը: Ասում էր՝ բավական է, չի կարելի էսպես առանձին ու մենակ ապրել: Ասում էր՝ գալիս ենք վերջնականապես որոշենք, թե ոնց պիտի ապրենք սրանից հետո: Իրար հետ:

ԵՎԱ – Աստված տա... Աստված տա...

ՍԱԹԵՆՆԻԿ – *(Հաղթական)* Բա՞ ... Տեսնո՞ւմ ես, որ դեպի իրենց մերն են վազում իմ գառնուկները:

*(Ներս է ընկնում Աշոտը)*

ԱՇՈՏ – Հը, քաղաք եմ գնում, տաք-տաք տոլմա չունե՞ս տանեմ բալիկներիդ, Սաթենիկ մորաքույր:

ՍԱԹԵՆՆԻԿ – Ունեմ, Աշոտ ջան, ունեմ, բայց վաղն իրենք են գալու, որ հենց էստեղ, իմ ձեռքից ուտեն, տղա ջան: Ու մշտական են գալիս, մշտական...

ԱՇՈՏ – Ճի՞շտ, դե աչքդ լույս, մորքուր: Աչքդ լույս... Ես... որ շատ, շատ ուրախ եմ...

ՍԱԹԵՆՆԻԿ – Ուրախության մեջ մնա: Հա, Աշոտ ջան, որտեղից էլ լինի, մի լավ, սև գառ գտի, առավոտը մորթի քո ձեռքով, ցավդ տանեմ... Բաստուրմա դնեմ, մինչև երեխեքս զան...

ԱՇՈՏ – Համարի եղած, մորքուր, էս աչքիս վրա: *(Եվային)* Ուրիշ զանգող չի՞ եղել: Դե ով որ ինձ հարցնի, էս գնացի...

*(Դուրս է գալիս)*

ԵՎԱ – Ներիր, քույրիկ ջան, իմ չոր ու չար խոսքերի համար... Աստված է վկա, որ քեզ էի խղճում ու շատ էի ուզում, որ տղերքդ հասկանան ու գնահատեն քեզ: Ներիր, Սաթենիկ ջան...

ՄԱԹԵՆԻԿ – Ներում եմ, Եվա ջան, ես էլ եմ քեզ հասկանում ու ներում: Ու դու էլ ինձ ներիր, որ պատասխանում էի մեկ-մեկ, դե մոր սիրտ է, ցավում է, էլի... Մենակ թե ամեն անգամ խցիկ-խցիկ ես ասում, ի՞նչ կլինի, այ աղջիկ, որ իսկապես մի խցիկ դնես անկյունում, մարդ հանգիստ խոսի...

ԵՎԱ – Ո՞նց թե, բա ես չլսե՞մ, թե ինչ եք խոսում: Էլ ինչի՞ եմ աշխատում էստեղ:

*(Ծիծաղում են)*

ՄԱԹԵՆԻԿ – Վա՛յ, ոնց էլ կանգնել-մնացել եմ... Հազար գործ ունեմ անելու... Վաղն էնպիսի մի սեղան եմ գցելու, Եվա... ոնց որ Մարկոսս էր սիրում... Ախր նրանից հետո մեր նոր տանը էլ ոչ մի անգամ քե՛ք չենք արել...

Վաղը դու էլ արի, Եվա...

ԵՎԱ – Կգամ, քույրիկ ջան, ես էլ վաղուց մի կարգին ուրախություն չեմ տեսել, անպայման կգամ...

*(Մաթենիկը դուրս է գնում)*

Փառք աստծո... գյուղը լցվում է...

*(Հեռախոսի զանգ)*

Այո՞, ընկեր Սեկոյա՞ն... թվերը շուտ եմ հաղորդել... *(նորից զանգ)* Ալլո՞, ներողություն, ընկեր Սեկոյան, հա, Հոնուտն է... ի՞նչ... ընկեր Սեկոյանը... այգի... *(չգիտի ինչ անել, նայում է մյուս լսափողին)* Լավ, միացնում եմ: Ո՞նց հաջողացրեց... *(Բարձրացնում է ձայնը, լսում է)*

ԻՎԵՏԱ – *(Ձայնը)* Ալլո՞, Սուրեն, Սուրեն, դո՞ւ ես...

ՍԵԿՈՅԱՆ – *(Ձայնը)* Ես եմ: Ո՞վ է:

ԻՎԵՏԱ – Իվետան եմ: Արդեն ձայնս էլ չես ճանաչում, հա՞...

ՍԵԿՈՅԱՆ – Չէ, ի՞նչ ես ասում, ուղղակի լավ չեր լսվում:

ԻՎԵՏԱ – Խոսքի տեր մարդ չեք երևում, ընկեր նախագահ:

ՍԵԿՈՅԱՆ – Ե՞ս, ինչո՞ւ:

ԻՎԵՏԱ – Ես ամեն օր սպասում եմ ձեր զանգին:

ՍԵԿՈՅԱՆ – Ես ամեն օր զանգ եմ տալիս, բայց դու երբեք տեղում չես լինում, Իվետա:

ԻՎԵՏԱ – Ե՞ս... Ստիպված ինքս եմ քանի անգամ զանգահարել, բայց այդտեղ մի վիուկ ունեք, ամեն անգամ ասում է, թե այգիներում ես...



ԵՎԱ - *(Մեկուսի)* Հողեմ գլուխդ, վիուկը ես եմ, հա՞...

ՄԵԿՈՅԱՆ - *(Ծիծաղում է)* Չէ, ինչ ես ասում, հրաշալի աշխատող է: Ես իսկապես ամբողջ օրն այգիներում եմ լինում: Ծանր շրջան է, Իվետա...

ԵՎԱ - Դու պրծար, ընկեր Սեկոյան... դու լավ պրծար...

ԻՎԵՏԱ - Այնքան ծանր, որ չե՞ս կարողանում մի անգամ քաղաք գալ... Թե՞ չեմ ուզում:

ՄԵԿՈՅԱՆ - Ինչո՞ւ չեմ ուզում: Բայց իսկապես հիմա հնարավոր չի:

ԻՎԵՏԱ - Դե ուրեմն պաշտոնապես հրավիրի, ես գամ... իմ խմբով...

ՄԵԿՈՅԱՆ - Չգիտեմ որքանով է հարմար, մի շարաթ առաջ էիք այստեղ:

ԻՎԵՏԱ - Իսկ դու ինձ իսկապե՞ս ուզում ես տեսնել:

ՄԵԿՈՅԱՆ - Ընմ...

ԻՎԵՏԱ - Չեմ լսում:

ՄԵԿՈՅԱՆ - Ինչո՞ւ չեմ ուզում...

ԻՎԵՏԱ - Դե ուրեմն վաղը չէ մյուս օրը Ակունք արի, այնտեղ ելույթ ենք ունենալու: Ես քեզ ուզում եմ տեսնել, Սուրեն... Ուզում ես հավատա, ուզում ես ոչ, բայց այն օրվանից հետո չեմ կարողանում մոռանալ քեզ: Ես կարոտում եմ քեզ, Սուրեն...

ԵՎԱ - *(Մեկուսի)* Փչացած շան աղջիկ:

ՄԵԿՈՅԱՆ - Ակունքո՞ւմ... Պարզևի մո՞տ... Բայց ինչպե՞ս գամ: Անունն ի՞նչ դնեմ...

ԻՎԵՏԱ - Բայց չե՞ որ դու էիր ասում, թե սոցմրցման մեջ եք Ակունքի հետ... Ես քեզ տեսնելու համար Ակունքն ուզեցի, Սուրեն... Գիտե՞ս Պարզևն ինչքան ուրախացավ: *(Ծիծաղում է)*

ՄԵԿՈՅԱՆ - Ինչո՞ւ ես ծիծաղում:

ԻՎԵՏԱ - Որովհետև... Լավ, կասեմ... Որովհետև այդ նույն Պարզևը... մի խոսքով բոլորն ուզում են հանդիպել ինձ... Իսկ ես միայն քեզ հետ եմ ուզում հանդիպել... Կգա՞ս ու Ակունք:

ՄԵԿՈՅԱՆ - Ինչ ասեմ՝ տեսնենք:

ԻՎԵՏԱ - Տղամարդու խոսք չեմ լսում: Կգա՞ս, թե չէ:

ՄԵԿՈՅԱՆ - Կգամ, կգամ, Իվետա...

ԻՎԵՏԱ - Այ այդպես... Համբուրում եմ, հեռախոսով... ավանսով...

ՍԵԿՈՅԱՆ – Ցտեսություն, Իվետա...

*(Անջատվում է խոսակցությունը)*

ԵՎԱ – Օհո՛: Բանը բանից անցնում է: Էս չեղավ: Սիրտս տպում էր ախր... Խեղճ Գոհար... Այսինքն խեղճը ո՞րն է, հիմար Գոհար: Այո, հիմար: Բա կնիկն էլ իր ջահել, սիրուն մարդուն, էն էլ նախագահ մարդուն աչքից հեռո՞ւ կպահի: Տարան – տարան, էլի... Հայհամե՛րգ...

*(Ներս է մտնում Նազիկը)*

ՆԱԶԻԿ – Բարև, Եվա տատ... ռադիոյի ձայնը բարձրացրու, էլի, համերգ կա...

ԵՎԱ – *(Իր մտքերի հետ է)* Ոչ մի հայհամերգ, ոչ մի հայհամերգ... Գետինը մտնի հայհամերգը...

ՆԱԶԻԿ – Ի՞նչ պատահեց, այ տատ...

ԵՎԱ – Ի՞նչ...Չէ, ոչինչ էլ չի պատահել, Նազիկ ջան... բայց կարող է պատահել: Ուղղակի գործս շատ է, համերգի ժամանակ չկա:

ՆԱԶԻԿ – Իսկ կարո՞ղ ես Երևան միացնել, տատ:

ԵՎԱ – Դո՞ւ Երևանի հետ ինչ գործ ունես, այ աղջիկ, սովորեցիր պրծար, էլի... Համարը որն է...

ՆԱԶԻԿ – *(Շիժադում է)* 55-12-44, գործ ունեմ...

ԵՎԱ – *(Վերցնում է լսափողը)* Ալո՞, ալո՞, շրջկենտրոն, Գրետա, Գրետա ջան, հենց արևո՞ւ ապրի, մի համար եմ ուզում Երևան... Ի՞նչ, գիծն ազա՞տ է... Բախտավոր աղջիկ ես, Նազիկ: 55-12-44... Ալո, ալո... Երևան... պատասխանիր Հոնուտին...

*(Նազիկին, հեզնանքով)* Գո՛րծ ունեմ... Երևանի հետ գործ չունես...

*(Նազիկը ծիծաղելով վերցնում է լսափողը)*

ՆԱԶԻԿ – Արայի՞կ, ո՞նց ես... Ես եմ: Ի՞նչ կարդացի՞ր... Ուրեմն դու թերթ էլ ես կարդո՞ւմ, ախպեր... *(Վախեցած Եվային է նայում):* Դե, ջահել թղթակից էր, ես մեկն ասում էի, ինքը տասն ավելացրել է: Դու էլ էստեղ լինեիր, քո նկարն էլ կտպեին: Ինչի՞, քո նկարն ավելի շուտ են տպել, չե՞ս հիշում, որ առանց տոմսի բռնել էին ավտոբուսի մեջ, քաղաքում ամեն տեղ պատերին փակցրել էին: Լավ էլ վերնագիր էր. «Թող հողն այրվի պորտաբույծների և խաբեբաների ոտքի տակ»: Մեղավորն ո՞վ է: Տոմսը չճամեիր... բկլիկ... *(Շիժադում է)* Այնպես որ քեզ նախանձելուց խնդրեցի, որ իմ նկարն էլ տպեն թերթում: Չէ, այ տղա, էստեղ ո՞վ կա: Եվա տատն է, էն էլ լավ չի լսում...

ԵՎԱ – Էդ ես լավ չեմ լսո՞ւմ, ավագակ...

ՆԱԶԻԿ - *(Օրհնատում է)* Դե լավ, լավ, կյանքդ մի պատմի... աղբյուրները լաց են լինում... Չէ...  
Դիսկոտեկը ձեռքիցս առան... Եվ գիտե՞ս ով, շատ լավ էլ ճանաչում ես, հրաշալի  
ճանաչում ես... Կամոն... Լեհաստանի հայ զավակը... Բա՞... Վարսենիկ մորաքույրը  
չթողեց... Ի՞նչ ընտանիք է, գիտե՞ս, այ թե ում մասին պետք է գրել... Քույր-եղբայրներն  
այնպես շրջապատեցին Կամոյին, որ... Իսկ տեխնիկա գիտի... լուքս... Պրոֆեսիոնալ...  
Պոզնանի կապի ինստիտուտն է ավարտել... Հա... Արայիկ, ռադիո է գնացել... Ի՞նչ  
ձայնագրություններ է բերել՝ կգժվես... Նրան ո՞վ կարող է մերժել՝ լեհերեն է խոսում...  
ու մեկ էլ որ չի անցնում հայերենի... Փայլուն տղա է... Ի՞նչ, դե դու էլ ի՞նչ ես Օթելլո  
խաղում գլխիս: Որ օրերով չես լվացվում ու Երևանի մուրն էլ նստում է երեսիդ, ուրեմն  
Օթելլո ե՞ս: Ուրեմն ես իրավունք չունե՞մ ոչ մի տղայի մասին խոսելու: Միջնադար:  
Կամ ավելի ճիշտ՝ սովետահայ այաթուլլա Հոմեյնի... Հետո... Չէ, սպասիր, սպասիր, դու  
էլ ո՞ր իրավունքով ես ... Գալիս ես, արի...

ԵՎԱ - *(Հուշում է)* Ասա ծնողներիդ հետ, ծնողներիդ հետ...

ՆԱԶԻԿ - *(Օրհնատում է)* Ես այստեղ ինձ հրաշալի եմ զգում... Այ տղա, ի՞նչ ես ողբերգություն  
խաղում: Կողքիս որ լինեիր, իրար հետ կնկարեին: Ու տակն էլ ոչ թե կգրեին... «Թող  
հողն այրվի», այլ, ասենք, «Տեխնիկումից՝ կյանք» կամ թե «Համայնական այգիների  
հերոսները»... Մտքովդ չանցնի, Արայիկ տղա, քաղաքն ինձ հակացուցված է... Ես ծիխ  
ու մրի նկատմամբ պերզիա ունեմ...

ԵՎԱ – Ասա, է, ասա, ցավդ տանեմ...

ՆԱԶԻԿ – Դե, հեռախոսը շատ զբաղեցրի: Այստեղ արդեն սպասողներ կան: Զուր տեղը զանգ  
չտաս, ես շատ զբաղված եմ: Ինչպես ուզում ես, Արայիկ: Մերոնց որ տեսնես՝ բարևի  
բոլորին: Ցտեսություն:

*(Ցած է դնում լսափոռը)*

ԵՎԱ – Գալու է, ա՛յ էսքան չկասկածես, գալու է, աղջիկ ջան...

ՆԱԶԻԿ - *(Օրհնատում է)* Ճի՞շտ, Եվա տատ...

ԵՎԱ – Հաստատ, աղջիկ ջան, ու հլա էջմիածնով պիտի գա, պիտի հազար մոմ վառի քեզ  
համար: Կասկած չունենաս...

ՆԱԶԻԿ – Հազար մոմ չի կարող, մոմը թանկ է, տատ...

*(Նազիկը ծիծաղելով դուրս է վազում: Եվան ժպտում է նրա ետևից, հետո նորից մտահոգված  
էտ ու առաջ է քայլում)*

ԵՎԱ – Հայհամերգ... Հայհամերգ...

*(Ներս է մտնում Ժենյան)*

Վայ, ընկեր Ժենյա, դու գյուղում ե՞ս:

ԺԵՆՅԱ – Այո, իսկ որտե՞ղ պիտի լինեի:

ԵՎԱ – Բա թերթում կարդացի, որ ակադեմիկոսն Երևան է եկել:

ԺԵՆՅԱ – Այո, եկել է, Երևանում է Ադիկը:

ԵՎԱ – Ոնց թե... Բա չես գնո՞ւմ տեսնես:

ԺԵՆՅԱ – Այդպես հարմար չէ, Եվա: Մի՞ թե ինֆորմացիայում չկարդացիր, որ նա շրջում է գիտահետազոտական ինստիտուտներում: Եվ այն էլ վիցե-պրեզիդենտի ընկերակցությամբ: Հիմա նրան ընդունելու են Կենտկոմում, Մինիստրների խորհրդում... Ես կկաշկանդեի նրա ազատությունը...

ԵՎԱ – Բա ես իմացա, որ քո ետևից «Վոլգա» է ուղարկել: Դրա համար էլ համոզված էի, որ գնացել ես...

ԺԵՆՅԱ - «Վոլգա» չէր, սիրելի Եվա: Այլ... «Չայկա»: Բայց ես չգնացի:

ԵՎԱ – Վայ, ինչի՞:

ԺԵՆՅԱ – Ադիկս շատ զգայուն հոգի ունի, Եվա: Նա մտածել է, թե ես կնեղանամ՝ իմանալով, որ ինքը Երևանում է: Բայց մի՞ թե ես նրա վիճակը չեմ հասկանում: Նրան հիմա շրջապատել են բոլորը: Խորհուրդներ են հարցնում, նրա հեղինակավոր կարծիքն են ուզում իմանալ, խնդրում են դասախոսություններ կարդալ: Ես հո չե՞մ կարող նրա հետ շրջել: Փաստորեն փակված պետք է մնայի հյուրանոցի նրա համարում...

ԵՎԱ – Սուտ չեմ ասի... Ես չեի դիմանա, կգնայի...

ԺԵՆՅԱ – Դու ավելի ծանր հարցերում ես դիմացել, Եվա... Ես հո գիտեմ...

*(Նայում է ժամացույցին)*

Արդեն կարելի է զանգահարել: Ես վարորդին խնդրեցի հայտնել Ադիկին, որ նրան զանգ եմ տալու ժամը երկուսին: Փորձիր միացնել, Եվա:

ԵՎԱ – Ո՞ր համարն է, ընկեր Ժենյա:

ԺԵՆՅԱ – Համարը չգիտեմ: Թող Մինիստրների խորհրդի հյուրանոցի հետ կապվեն: «Հրազդան», «Հրազդան» հյուրանոց: Այնտեղ կմիացնեն...

*(Եվան կամացուկ խոսում է շրջկենտրոնի հետ: Ժենյան ետ ու առաջ է քայլում առաջին պլանում՝ հուզված ու անհանգիստ, սակայն միշտ գլուխը բարձր, արժանապատվությամբ):*

ԵՎԱ – Այո՞ ... ալո... ակադեմիկոս Ադամ Սիմոնյանին ենք խնդրում, մատաղ քեզ: Ի՞նչ...

(*Ժենյային*) Ասում են՝ ո՞վ է հարցնում... Մայրն է հարցնում, տղա ջան, մայրը... Արի, ընկեր Ժենյա...

ԺԵՆՅԱ – Արդե՞ն... Ալո՞, ես եմ, Ադիկ ջան, մայրիկն է... Ես հարմար չգտա, բալիկս: Ինչո՞ւ տիկնոջ ու թոռներին էլ չես բերել... Դե, իհարկե, գործեր, գործեր... Կարդում եմ քո մասին... Ես շատ, շատ ուրախ եմ քեզ համար: Ինչպես էլ հասցնում ես, Ադիկ ... Մերթ ձայնդ ճապոնիայից է գալիս, մերթ Անգլիայից ու մերթ հանկարծ Նովոսիբիրսկից... Ես բոլոր լուրերը լսում եմ, բալիկս, հույս ունենալով, որ քո մասին էլ լուր կստանամ... Որ կիմանամ, թե ինչպես ես... Ես չեմ տրտնջում, Ադիկ, ես հպարտանում եմ քեզանով...

ԵՎԱ – Մենք էլ, մենք էլ...

ԺԵՆՅԱ – Բոլորը... Գյուղում քեզ շատ են հիշում... Մի քանի օր առաջ Տիգրանը... Այգիների պահակը... Դու նրան չես հիշում... Դե հասկանալի է... Բայց նա քեզ հիշում է... Այո, կատակով ասաց. «Ընկեր Ժենյա, գիտե՞ք, թե ինչու ենք ամեն տարի գերակատարում մրգի պլանը, որովհետև Ադամն այլևս միրգ չի թոցնում այգիներից»: Շատ ծիծաղեցինք... Դա կատակ էր, Ադիկ... Միայն կատակ... Ես ուղղակի ուզեցի շեշտել, որ այստեղ բոլորն էլ քեզ հիշում ու սիրում են: Ընկեր Սեկոյանը արդեն իրար է խառնվել... Մեր նոր նախագահն է, շատ համակրելի երիտասարդ է, Ադիկ... Ինչպե՞ս թե ինչու, քեզ դիմավորելու համար: Ասում է՝ սիրելի ակադեմիկոսը մեր ամբողջ գյուղի ամենաթանկագին հյուրն է և մենք ենք պարտավոր ճաշկերույթ տալ նրա պատվին: Իսկ ես ասում եմ, իմ որդին իմ եփած ճաշին կարոտած կլինի... Ես նրա համար բանջար եմ եփելու...

Ալո՞ ... Դե հարցը հո ուտելը չի, Ադիկ... Չէ, դու ինձ սխալ հասկացար... Ես կարծում էի, թե բանջարը... մանկության... Դե ես միշտ էլ սենտիմենտալ եմ եղել... Դու հո չես մոռացել մեր սովորությունը, բալիկս, երբ հյուր են ընդունում, ինչպե՞ս կարելի է առանց սեղանի... (*Եվան կամացուկ դուրս է գալիս սրահից՝ Ժենյայի երախտագիտությամբ լի հայացքի տակ*) Ես ուզում եմ ասել... Դա շատ դաժան բան կլինի, տղաս, քեզ սպասում են այստեղ... Ես... գուցե և հիմարաբար... խոսք եմ տվել քո անունից: Դու ինչպե՞ս կարող ես չայցելել քո մանկության արահետները... երբ այդքան մոտիկ ես... Մեկ ժամ... Ընդամենը մեկ ժամ... Ավելի սենտիմենտալ չե՞մ լինի, եթե ասեմ, որ կարելի էր այցի գալ հայրիկի գերեզմանին... Մյուս տարի... մյուս տարի գերեզմանը կարող է մեկը չլինել... Ես շատ եմ ձերացել, տղաս... Եթե իմ աշակերտները չլինեին... Ներիր, որ քեզ վիշտ եմ պատճառում... Ես ամբողջ կյանքում աշխատել եմ հասկանալ քեզ և ինձ թվում է, թե կարողացել եմ հասկանալ... Բայց հիմա չեմ կարողանում... Որովհետև... որովհետև այ այսքան ժամանակամիջոցում, որ դու հեռախոսով խոսում ես ինձ հետ, բալիկս, կարող էիր գալ ու տեսնել ինձ... Ինձ «Չայկա» պետք չէ, տղաս... Ինձ ոչինչ պետք չէ: Ոչինչ: Ի սեր ասած... ներիր ինձ, Ադիկ... Ես իսկապես ձերացել եմ և հիմար – հիմար բաներ եմ ասում: Ներիր, տղաս, ես իսկապես հաճախ մոռանում եմ, թե դու ով ես հիմա և որքան ես ծանրաբեռնված: Ինձ միշտ թվում է, թե դու իմ փոքրիկ, անհոգ բալիկն ես և իմ փոքրիկ թիկը... Հիշո՞ւմ ես, ես քեզ ոտանավոր էի սովորեցնում, իսկ դու չէիր կարողանում արտասանել «ծ» տառը և ասում էիր. «Ճիտը ճառին ճլվլում է, ճիվ-ճիվ-ճիվ»: Այնքան անուշիկ էիր: Չե՞ս հիշում:

Բոլորովի՞ն չես հիշում: Բայց հետո կհիշես, գիտե՞ս, անպայման կհիշես... Ես վերջերս կարդացի մի աղջկա մասին, որ մանուկ հասակից Ռուսաստանում է ապրել, ռուսական շրջապատում, ռուսագրի ամուսնու հետ... Եվ երբ մեռնում է՝ խորին ծերության հասած, նրա մահիճը շրջապատող մարդիկ հանկարծ լսում են, որ նա հոգևարքի մեջ ինչ-որ օտար լեզվով է խոսում, ինչ-որ բառեր է մրմնջում: Եվ, պատահաբար ներկա գտնվող մի հայ է միայն հասկանում, որ հայերեն է խոսում ծեր կինը:

Ա՛խ, դու կարդացե՞լ ես: Այո, այո, Հրայր Քոչարի պատմվածքն է: Զարմանալի պատմվածք է, չէ՞ ... Դե, դե հաջողություն, բալիկս, քիչ չարչարվիր, պահիր քեզ, Ադիկ: Մինչև որ ո՞վ գիտե... գուցե թե հանդիպենք մի օր... Ցտեսություն, տղաս...

*(Ցած է դնում լսափողը և դառնալով ներս մտնող Եվային, ասում է կեղծ ժպիտով՝ արագ-արագ սրբելով արցունքները):*

Խենթուկ է, դու չգիտես թե ինչ խենթուկն է իմ Ադիկը, Եվա: Պատկերացնո՞ւմ ես, շատ շտապ Փարիզ է թռչում՝ սիմպոզիումի, և պնդում է, որ ես էլ իր հետ գնամ: Ես, ասում է, ուզում եմ Փարիզին ցույց տալ քեզ, մայրիկ... Խենթուկ չէ, ի՞նչ է, այնքան ծիծաղեցի, որ աչքերիցս արցունքներ թափվեցին: Ես... և հանկարծ Փարիզը... Պատկերացնո՞ւմ ես...

*(Հեռանում է)*

ԵՎԱ – Էսքան ցա՞վ կլինի աշխարհում, տեր աստված... Էսքան ցավ կլինի...

*(Միացնում է ռադիոն՝ ինչ-որ երգ է հնչում: Նորից հիշում է)*

Հայհամերգ... հայհամերգ... հայհամերգ... *(Վերցնում է լսափողը, մտածում է)*

Ալո՞, շրջկենտրոն, Գրետա, Գրետա ջան, երաժշտական դպրոց միացրու, հենց ապրես... Ալո՞, Գոհարին եմ ուզում... Էդ քանի՞ Գոհար ունեք դուք... Սեկոյան...

Գոհա՞ր, բարև, Գոհար ջան, Եվան ա Հոնուտից: Հեռախոսավարը: Չէ, ընկեր Սեկոյանն այգիներում է: Չէ, ես եմ ուզում քեզ տեսնել: Գործ ունեմ քեզ հետ, աղջիկ ջան, պետական գործ: Որ մեզ լսող չլինի, գնա ձեր հեռախոսակայան ու հենց էնտեղից զանգ տուր ինձ: Հա: Սպասում եմ: Որ զանգ տաս կպայմանավորվենք... Չէ, դեռ ոչ մի բան էլ չի պատահել, աղջիկ ջան: Հենց ուզում եմ հանդիպենք, որ չպատահի...

*(Ցած է դնում լսափողը, խոսում է ինքն իրեն)*

Դե հո սուտ չեմ ասում: Եթե ուզում են մեր ազնիվ նախագահին երգելով ճանապարհից շեղեն, դա հո անձնական գործ չի: Դա հենց պետական գործ է որ կա, Եվա:

*(Մթնեցում)*

## ՊԱՏԿԵՐ ՎԵՅԵՐՈՐԴ

*(Սաթենիկի տան բակը: Կողքին այգու ցանկապատն է ու փոքրիկ դարպասը: Մեջտեղում փոքրիկ ջրավազան է՝ շատրվանով: Ծաղիկների մարգեր: Քարե սանդուղքը երկրորդ հարկ է բարձրանում: Տուֆակերտ, հիանալի տուն է: Տնից երաժշտություն է հնչում: Բակում սեղան է բացված: Ներս ու դուրս են անում Սաթիկն ու Պետիկը, ավլում են բակը, սեղանն են հարդարում... Մի կողմում խորովածի մանդալի վրա շարված է արքաղը):*

ՍԱԹԻԿ - *(Չայն է տալիս)* Սաթենիկ մորաքույր... Սաթենիկ մորաքո՛ւյր...

*(Պատշգամբ է դուրս գալիս Սաթենիկը)*

ՍԱԹԵՆԻԿ – Հա, մատաղ...

ՍԱԹԻԿ – Հավերը խաշե՞մ, թե խորովելու եք:

ՍԱԹԵՆԻԿ – Խաշելու ենք, դիր կրակին, ցավդ տանեմ... Գազիկ, Գազիկ ջան: Այ տղա, քեզ հետ եմ... Գազիկ...

*(Սաթիկը ծիծաղում է)*

ՊԵՏԻԿ – Ո՞վ... ե՞ս... ես Պետիկն եմ, Սաթենիկ մորաքույր...

ՍԱԹԵՆԻԿ – Ո՞նց թե Պետիկը: Բա երեկ ասում էիր Գազիկն եմ...

ՊԵՏԻԿ – Դե երեկ երևի Գազիկն է եղել...

ՍԱԹԵՆԻԿ – Քոռանամ ես... Այ բալա, երեկ դու չէի՞ր հնդուհավերը մորթում:

ՊԵՏԻԿ - *(Ծիծաղում է)* Չէ, մորաքույր, ես հնդկահավերից վախենում եմ...

ՍԱԹԵՆԻԿ – Այ ձեր ցավը տանեմ, Վարսենիկը հո ձեր ձեռքին կգժվի... Պետիկ ջան, կարող ե՞ս կարասից մաճառ քաշել...

ՊԵՏԻԿ – Չէ, կհարբեմ, Սաթենիկ մորաքույր...

ՍԱԹԵՆԻԿ – Դե լավ, Աշոտը կգա, կքաշի... Աստղիկ, Աստղիկ ջան...

ՊԵՏԻԿ – Նա Աստ...

ՍԱԹԻԿ – Գործ չունես, Պետիկ, ի՞նչ տարբերություն, թող կարծի, թե Աստղիկն եմ: Լսում եմ, մորաքույր...

ՍԱԹԵՆԻԿ – Պոմիդորը, վարունգը մի լավ լվա, ցավդ տանեմ: Տակի տանն է:

ՍԱԹԻԿ – Հենց հիմա...

ՊԵՏԻԿ – Գծի մեկը, ինչի՞ չես ասում, որ Սաթիկն էս: Վաղը կարող է դպրոց գրել ու շնորհակալություն հայտնել Աստղիկին:

ՍԱԹԻԿ – *(Օրծաղում է)* Ոչինչ, ես Աստղիկի արածների համար շատ եմ շնորհակալություններ ստացել:

*(Ներս է մտնում: Պետիկը մուրճը ձեռքին մոտենում է դարպասին, ինչ-որ դուրս ցցված մեխ իր տեղը գցելու, երբ հայտնվում են Մանվելը ու Սամվելը: Պետիկն անմիջապես ետ է դառնում ու ձայնում է):*

ՊԵՏԻԿ – Սաթենիկ մորաքույր, Սաթենիկ մորաքույր...

ՍԱԹԵՆԻԿ – *(Պատշգամբ է դուրս գալիս)* Հա, մատաղ... *(Նկատում է որդիներին)* Եկա՞ք... Էդքան շո՞ւտ... Բալեքս... *(Արագ-արագ իջնում է սանդուղքով)* Եկա՞ք, ձեր ցավը տանեմ *(Գրկում, հեղթով համբուրում է)* Ա՛խ, շրթունքներս կարոտել էին, է... Չեմ կշտանում: Բա ինչո՞վ եկաք:

ՍԱՄՎԵԼ – Ավտոբուսով, մամ...

ՍԱԹԵՆԻԿ – Քոռանամ ես, հոգնած կլինեք... Բա ի՞նչ անեմ, ես էլ ձեզ ճաշին էի սպասում: Դեռ ոչ մի բան պատրաստ չի: Պետիկ ջան, Պետիկ ջան, մանդալը վառի, թող մի երկու կտոր խորոված ուտեն... Մինչև որ հավաքվեն բոլորը:

*(Պետիկը դեպի մանդալն է նետվում)*

ՄԱՆՎԵԼ – Պետք չի, պետք չի... Էդ ովքե՞ր են գալու որ...

ՍԱԹԵՆԻԿ – Դե նախագահին, ընկեր Ժենյային... մի քանի հոգու հրավիրել եմ...

ՍԱՄՎԵԼ – Ի՞նչ կարիք կար, այ մեր...

ՍԱԹԵՆԻԿ – Ո՞նց թե ինչ կարիք կա: Սրանից էլ լավ առի՞թ: Ասլան տղերքս տուն են եկել: Մեր օջախում տոն է էսօր: Թող բոլորն էլ գան, տեսնեն, որ նորից լցվել է Մարկոսի տունը: Թող բոլորը տեսնեն, որ նորից խորովածի ծուխ է բարձրանում էս տնից ու տղերքս իրենց մոր գցած պճպճան մաճառն են խմում: Ու թող խաղաղվի վերջապես ձեր հոր խռոված հոգին...

*(Գոզնոցի ծայրով սրբում է արցունքները)*

ՍԱՄՎԵԼ – Վա՛յ, մամ ջան, վայ, քո լացն ու ծիծաղը իրար հետ են...

ՄԱՆՎԵԼ – Ինչի՞ ես լաց լինում, այ մեր...

ՍԱԹԵՆԻԿ – Որ ձեր հորը հիշեցի, սիրտս լցվեց, բալեք... Լույս իջնի գերեզմանին: Ախր ձեզանից խռով գնաց էն հայր: Ամեն մի քարը դնելուց ձեր անունն էր տալիս ու շարում էր: Ասում էր՝ ես մի հարկում Մանվելս կապրի իրա երեխեքի հետ, էն մի հարկում էլ



Մամվելս կապրի իրա երեխեքի հետ, ես ու դու էլ օղայում կապրենք, այ կնիկ, կնայենք նրանց ու կուրախանանք:

ՄԱՄՎԵԼ – Հա, շատ չարչարվեց հայրիկը:

ՄԱՆՎԵԼ – Բա էսպիսի պալատ սարքելը հանաք ես կարծո՞ւմ: Մի տարի է չեմ կարողանում մի սենյակս վերանորոգել: Երկու հազար մանեթ փող եմ ծախսել, համա դեռ կեսին էլ չեմ հասել:

ՄԱԹԵՆԻԿ – Բայց դե չուրախացավ խեղճ մարդը... Սարքեց, պրծավ, ձեն տվեց ձեզ, չեկաք, մի տարի այ էդ բալկոնում կանգնած ծխեց-ծխեց՝ աչքը ձեր ճանապարհին ու էլ չդիմացավ, մեռավ սրտի ցավից...

ՄԱՄՎԵԼ – Դե լավ, վերջ տուր, մամ...

*(Ներքնահարկից, պոմիդորով ու վարունգով լի մաղը ձեռքին դուրս է գալիս Սաթիկը, տեսնում է հյուրերին, շփոթվում է)*

ՄԱԹԵՆԻԿ – Բեր, բեր, սեղանին դիր, ցավդ տանեմ... Մեր Վարսենիկի երեխեքն են, տղերք ջան... Ինձ պահողը նրանք են...

ՄԱԹԻԿ – Դե մենք գնանք, Սաթենիկ մորաքույր, որ պետք լինենք, ձայն տվեք:

ՄԱԹԵՆԻԿ – Որ ժողովուրդը հավաքվի, անպայման կտանք, Սաթիկ ջան: Կամոյին էլ կբերեք, թող մի լավ հայկական քեֆ տեսնի:

ՄԱՄՎԵԼ – Կամո՞ն ով է, այ մեր:

ՄԱԹԵՆԻԿ – Իրենց ախպերն է, Լեհաստանից է եկել... Հետո կպատմեմ ձեզ...

*(Երեխաները հեռանում են)*

Հե-հե՛յ, աշխարհի որ ծայրից արյունը քաշում, էստեղ է բերում: Իսկ դուք հրես մեր կողքին մինչև հիմա անտարբեր նստած էիք: Վա՛յ, ինչքան եմ ուրախ ձեզ համար, ձեր ցավը տանեմ... Որ հիմի մեռնեմ էլ, այ էսքան դարդ չունեմ:

ՄԱՆՎԵԼ – Քո ապրելն է մեզ պետք, մամ, քո մեռնելը մեզ պետք չի:

ՄԱԹԵՆԻԿ – Հա, բալա ջան, ձեզ համար կապրեմ... Վայ, քոռանամ ես, էլի խոսքով ընկա, մոռացա, որ հիմի սոված եք: Գոնե մի քիչ լավաշ ու պանիր բերեմ, կերեք, մինչև որ...

ՄԱՄՎԵԼ – Պետք չէ, մամ...

ՄԱԹԵՆԻԿ – Վա՛յ, ո՞նց թե պետք չի...

*(Վազում, շենքն է մտնում)*

ՄԱՄՎԵԼ – Դե ինչ որ ուզում ես ասել, հիմա ասա, որ ժողովուրդը հավաքվեց...

ՄԱՆՎԵԼ – Ե՛ս ինչի պիտի ասեմ, դու ասա... Մամվել:

ՄԱՄՎԵԼ – Ես ի՞նչ ասեմ: Մեծ ախպերը դու ես...

ՄԱՆՎԵԼ – Ուրիշ ժամանակ մեծ ու փոքր չես հարցնում...

ՄԱՄՎԵԼ – Ես չեմ կարող, Մամվել, թե դու կասես, կասես...

ՄԱՆՎԵԼ – Էլի սկսեցի՞ր...

ՄԱՄՎԵԼ – Ինձ որ մնա, ճիշտն ասած, ոչ մի բան էլ չեմ ասի: Խիղճս տանջում է:

ՄԱՆՎԵԼ – Այ տղա, նորի՞ց, հարյուր անգամ պայմանավորվել ենք: Կնգադ մոտ առյուծ ես կտրում:

ՄԱՄՎԵԼ – Լավ, սուս, սուս... գալիս է...

*(Մաթենիկը դուրս է գալիս՝ մեծ սկուտեղը ձեռքին, մեջը լավաշ, պանիր, կանաչի, քայլում է ասես պարելով)*

ՄԱԹԵՆԻԿ - *(Շիծաղելով)* Կհավատա՞ք, ոտքերս դողում են, ուզում եմ ուրախությունից պար գամ... Էս գիշեր պարելու եմ, հա ... պարելու եմ, հերիք է... Ախր դուք չգիտեք, թե ինչքան են հոգուս հետ խաղացել ձեր պատճառով: Էն Եվուկը, Եվուկը, ամեն անգամ ասում է. «Հը, գառնուկներդ էլի կաթ են ուզո՞ւմ»: Էսօր կանչել եմ, ինատու, թող տեսնի, որ իմ տված կաթը ջուր չի դարձել, թող տեսնի, որ իմ հալալ կաթով մեծացել են իմ գառնուկներն ու եկել են, որ ծխացնեն իրենց հորական օջախը... Հլա որ էգուց հարսներիս ու թոռներիս ձենը տունը լցվի...

ՄԱՆՎԵԼ – Նստի՛ր, նստի՛ր, այ մեր...

ՄԱԹԵՆԻԿ – Ոտքերս չեն նստում, ցավդ տանեմ, պար են գալիս...

ՄԱՄՎԵԼ – Նստի, մամ ջան...

ՄԱՆՎԵԼ – Դու ինձ սխալ ես հասկացել, մամ...

ՄԱԹԵՆԻԿ – Ի՞նչն եմ սխալ հասկացել, Մամվել ջան... Սպասի մի կուլա մաճառ բերեմ:

ՄԱՆՎԵԼ – Պետք չի, նստի՛ր:

ՄԱԹԵՆԻԿ – Հա՞, ի՞նչն եմ սխալ հասկացել, գառ ջան...

ՄԱՆՎԵԼ - *(Մամվելին)* Դե խոսի, էլի, արա...

ՄԱՄՎԵԼ – Հենա ասում ես, էլի...

ՄԱՆՎԵԼ – Մամ, դու սխալ ես հասկացել հեռախոսով իմ ասածը...

ՍԱԹԵՆԻԿ – Ինչը՞ ...

ՄԱՆՎԵԼ – Էն որ ասացի, թե ուզում ենք, որ սրանից հետո միասին ապրենք:

ՍԱԹԵՆԻԿ – Բան չհասկացա, հիմա չեք ուզո՞ւմ, որ իրար հետ ապրենք:

ՄԱՄՎԵԼ – Ուզում ենք, մայրիկ...

ՍԱԹԵՆԻԿ – Բա էլ ինչի՞ եմ սխալ հասկացել:

ՄԱՆՎԵԼ – Ուզում ենք, որ դու գաս մեզ մոտ, Երևան:

ՍԱԹԵՆԻԿ – Էլի սկսեցիր, ո՞նց գամ, այ բալա, ո՞ւմ թողնեմ էս հսկայական տունը, տնտեսությունը, տնամերձը...

ՄԱՆՎԵԼ – *(Մամվեղին)* Արա, մի բան էլ դու ասա, էլի... Ասում ենք՝ բեր տունն ու այգին ծախի ու արի Երևան: Կուզես մեր տանն ապրի, կուզես Մամվեղի տանը: Կամ կուզես մի ամիս մեր տանն ապրի, մի ամիս Մամվեղի տանը:

ՄԱՄՎԵԼ – Մեր տուն արի, այ մեր... մեր տուն...

ՍԱԹԵՆԻԿ – Ի՞նչ... *(Օրծաղում է կեղծ, մի վերջին հույսով)* Հա՛ ... Հասկացա, հանաք եք անում, չէ՞: Խաղում եք հոգուս հետ, շան լակոտներ... Մի բոպե հավատացի, քիչ էր մնում սիրտս կանգներ... Էստեղ են ասել՝ կատվի խաղ, մկան մահ... Վա յ, Մանվել, Մանվել, էնքան լուրջ էլ խոսում էիր, որ սկզբից բոլորովին գլխի չընկա, որ հանաք ես անում... Տղերք ջան, եկեք մանդալը վառենք: Վառենք, վառենք... Որ խորովածի հոտը բարձրանա, մարդիկ առանց կանչելու էլ կհավաքվեն: Լուցկիդ տուր, Մամվել ջան... Լուցկիդ... Ես գնամ բաստուրման բերեմ...

ՄԱՆՎԵԼ – Դե թող մանդալը, լավ էլի... Ինչի՞ ենք հանաք անում, շատ էլ լուրջ ենք ասում: Բա էսպես կարելի՞ է ապրել: Բա քո կյանքը կյանք է՞, այ մամա... Տղաներ ունես, հարսներ ունես, թոռներ ունես... ու ապրում ես մեն-մենակ, որբի պես, անտեր... Մենք էլ թասիբ ունենք, չէ՞ ... Մամվել՛...

ՄԱՄՎԵԼ – Դու մեր տանը քեզ լավ կզգաս, մամ ջան...

ՄԱՆՎԵԼ – Ասում ես՝ Եվուկը ծաղրում է, կծաղրի, բա ի՞նչ... Ո՞վ չի ծաղրի... Բա մարդ էլ քաղաքում երկու տուն ունենա ու ինքը մեն-մենակ կուչ գա էս խուլ գյուղում, թոռներ ունենա... ու մնա հարևանի երեխաների հույսին... Բա մեր պատիվն ո՞ւր մնաց... Մամվել...

ՍԱԹԵՆԻԿ – Ուրեմն, հանաք չեք անում...

ՄԱՄՎԵԼ – Մամա ջան, մի կողմից ճիշտ է ասում Մանվելը: Արդեն ջահել չես: Մրսել կա, հիվանդանալ կա, անկողին ընկնել կա: Ո՞վ պիտի քեզ մի բաժակ թեյ տա, ո՞վ պիտի քեզ դեղ տա, ո՞վ պիտի լինի քո կողքին...

ՄԱԹԵՆԻԿ – Իսկ ինչի՞ դուք չեք ուզում իմ կողքին լինել... Ինչի՞ չեք ուզում գալ ու ապրել ձեր տանը:

ՄԱՆՎԵԼ – Այ մամա, ո՞նց գանք, է, մենք աշխատում ենք, երեխաները դպրոց են գնում...

ՄԱԹԵՆԻԿ – Ձեր աշխատանքից էստեղ էլ կա: Ու էստեղ էլ դպրոց կա, որ ձեր նմանների պատճառով քիչ է մնում փակեն:

ՄԱՄՎԵԼ – Մամ ջան, սովորել ենք քաղաքին, էստեղ դժվար կլինի: Արի, մամ ջան, արի... Էնպես կպահենք քեզ... Հավատա... Ախր ինչի՞ մենակ մնաս...

ՄԱՆՎԵԼ – Բա ի՞նչ... Երկու տուն ունես... Որտեղ կուզես կապրես խանում-խաթունի պես...

ՄԱԹԵՆԻԿ – Իսկ էս տունն ուրեմն ծախենք...

ՄԱՆՎԵԼ – Ծախենք, բա ի՞նչ, այ մեր... Անտեր տունն իրեն-իրեն էլ կքանդվի: Դու հո ինձնից լավ գիտես: Քանի տեսքը նոր է, արի ծախենք: Էն էլ ասեմ, որ հիմա հողամասերի գները լավ թանկացել են...

ՄԱԹԵՆԻԿ – Հո՞ղը ոնց եք ծախում, հողը պետությանն է:

ՄԱՆՎԵԼ – Դե ով որ տունն առնի, իրեն-իրեն հողն էլ նրանը կդառնա, էլի: Ես մեկին գտել եմ, մամ, եկել տեսել է ու շատ է հավանել տունն էլ, այգին էլ... Մեր ուզած գինը տալիս է:

ՄԱԹԵՆԻԿ – Էդ ո՞վ է, որ տեսել է...

ՄԱՄՎԵԼ – (Օրհճաղում է) Էն որ քո ուղարկած մրգի դատարկ զամբյուղները ետ բերեց... Դիտմամբ ինքը բերեց, որ տունն ու այգին տեսնի...

ՄԱՆՎԵԼ – Աչքերը բաց էին մնացել...

ՄԱԹԵՆԻԿ – Հա, ես էլ ասեմ, էդ ոտից գլուխ կաշի հագած մարդը ինչի՞ է եղպես հոտոտում ամեն ծակ ու ծուկ: Նույնիսկ հարցնում էր, թե որ ծառն ինչքան բերք է տալիս...

ՄԱՄՎԵԼ – Նա կհոտոտի...

ՄԱՆՎԵԼ – Նրա հերն էլ անիծած, կարևորն այն է, որ լավ փող է տալիս: Հիմա տես ինչ է դուրս գալիս, մամ ջան, համ մենք իրար հետ կապրենք, համ փողի տեր կդառնանք: Ամոթ էլ է, հիմա քաղաքում ավտո չունեցողին մատով են ցույց տալիս: Ես ու Մանվելը մի-մի հատ ավտո կառնենք ու հենց որ սիրտդ ուզի գյուղ գալ... ավտոն նստում ես ու... ուր ուզում ես... Իսկ մնացած փողն էլ...

ՄԱԹԵՆԻԿ – Քեզ փող շա՞տ է պետք, Մանվել ջան:

ՄԱՄՎԵԼ – Փող ո՞ւմ պետք չի, մամա ջան...

ՄԱՆՎԵԼ – Բա պետք չի՛ ...

ՄԱԹԵՆԻԿ – Բա ինչի՞ ձեր հոր գերեզմանն էլ չեք ծախում, տղերք ջան...

ՄԱՄՎԵԼ – Ինչը՞ ...

ՄԱԹԵՆԻԿ – Ձեր հոր գերեզմանը, Սամվել ջան, գրանիտ քար է, ուղիղ երկու հազար ռուբլի էմ տվել: Որ փող է պետք, ծախեք, էլի...

ՄԱՆՎԵԼ – Դու մեզ ձեռ ես առնո՞ւմ:

ՄԱՄՎԵԼ – Մամ...

ՄԱԹԵՆԻԿ – Քանի դեռ երեխեքից բացի ձեզ ոչ ոք չի տեսել, վեր կացեք ու սուս ու փուս գնացեք, տղերք ջան: Ու չափարի տակով, գողեգող գնացեք, որ ձեզ մարդ չտեսնի: Թե չէ ես ամոթից կմեռնեմ:

ՄԱՆՎԵԼ – Յա, դու մեզ դուրս ես առնո՞ւմ:

ՄԱԹԵՆԻԿ – Դուք էք ձեզ դուրս արել, բալա ջան, դուք էք ինքներդ ձեզ դուրս առնում: Գնացեք, շուտ գնացեք, որ ժամանակ ունենամ մտածելու, թե ինչ պատասխան տամ մարդկանց: Գնացեք... Թողեք մենակ մնամ, գառնուկներ ջան...

ՄԱՄՎԵԼ – Մամ ջան... Գնանք, արի գնանք, Սամվել... Բավական է...

ՄԱՆՎԵԼ – Չէ, հլա սպասիր... Դե որ բանն էդտեղ հասավ, ես պիտի խոսեմ: Մենք էս տնից բաժին չունե՞նք, այ մեր: Օրենք կա, կարգ կա: Ինչքան որ քեզ է հասնում, էդքան էլ ինձ ու Սամվելին է հասնում:

ՄԱՄՎԵԼ – Ես չեմ ուզում, չեմ ուզում...

ՄԱՆՎԵԼ – Ինչի՞ չես ուզում, է: Սա մեզ լրիվ խոտակերի տեղ է դրել: Օրենքով մի բան չի՞, մենք մեր հոր ժառանգները չե՞նք: Դատարան կտանք, թող բաժանեն ոնց որ կարգն է: Հետո մենք հանգիստ կարող ենք ծախել մեր բաժինը: Իրա ի՞նչ գործն է: Շատ է ուզում, թող ապրի օտար մարդկանց հետ:

ՄԱԹԵՆԻԿ – Ու դուք կարող էք ինձ դատի տալ, հա՞, տղերք ջան...

ՄԱՆՎԵԼ - *(Սամվելին)* Դու չխոսես: *(Մորը)* Դու ես ստիպում, հենց դու: Խաթրով չես տալիս, մենք էլ օրենքով կվերցնենք, որպես մեր հոր ժառանգները...

ՄԱԹԵՆԻԿ – Ու դուք ձեր հոր ժառանգն էք, հա՞: Էս ծառերը դուք էք տնկել, հա՞: Էս տունը դուք էք սարքել, հա՞ ...

ՄԱՆՎԵԼ – Դա ոչ մի նշանակություն չունի: Մեր հարևանը փաստաբան է, ես հարցրել եմ: Նա ասում է, որ բոլոր դեպքերում մենք ժառանգության իրավունք ունենք:

ՄԱՄՎԵԼ – Հա, հա, օրենքն այդ է ասում, մամ ջան...

ՄԱԹԵՆԻԿ – Եվ ուրեմն դուք ինձ դատի կտաք, իմ բալաները...

ՄԱՆՎԵԼ – Բա ի՞նչ պետք է անենք:

ՄԱԹԵՆԻԿ – Լույս իջնի գերեզմանիդ, Մարկոս, իմաստուն մարդ էիր դու: Դու ավելի լավ էիր ճանաչում քո զավակներին, քան թե ես: Սոր սիրտն իսկապես որ կույր է, մեղա, որ նեղանում էի քեզ վրա, մեղա քեզ, որ ստիպում էի փոխել կտակդ:

ՄԱՄՎԵԼ – Ինչո՞ւ, ի՞նչ կտակ:

ՄԱՆՎԵԼ – Խոսում է, էլի...

ՄԱԹԵՆԻԿ – Որովհետև ձեզ լավ ճանաչելով և հակառակ իմ կամքին, ձեր հերն ինձ է կտակել տունն էլ, այգին էլ, ամբողջ ունեցվածքն էլ... Մենակ ինձ...

ՄԱՆՎԵԼ – Ո՞նց թե...

ՄԱԹԵՆԻԿ – Էդպես, տղա ջան... Այնպես որ ստիպված եք սպասել, մինչև որ մեռնեմ: Ուրիշ ճար չունեք: Որովհետև քանի ես կամ, էս տունն իմն է: Պիտի սպասեք...

ՄԱՆՎԵԼ – *(Իրեն կորցրած)* Ու կսպասենք, մի ոտքդ արդեն գերեզմանում է...

ՄԱՄՎԵԼ – Ինչեր ես խոսում, ապուշ...

ՄԱՆՎԵԼ – Ապուշ եմ, բա ինչ եմ, որ կարծում էի, թե իմ մերը համեստ ու խեղճ մեր է, թե սիրում է ինձ, կյանքը կտա ինձ համար... Սուտ բան է, սուտ... տան վրա է դողում... Հա, հա, հենց կսպասեմ, անհամբեր կսպասեմ, որ մեռնես...

ՄԱԹԵՆԻԿ – Իզուր տեղը չսպասես, տղա ջան: Ես իրոք որ համեստ ու խեղճ կնիկ եմ... Բայց մինչև մի սահման... Որովհետև ամեն ինչ էս աշխարհում իր սահմանն ունի: Ու քանի որ դու, իմ որդին, ծախել ես քո ամեն ինչը՝ քո հոգին, քո խիղճը, քո մարդկությունը ու հիմա էլ անցյալդ ես ուզում ծախել, հորդ գերեզմանն ես ուզում ծախել...

ՄԱՄՎԵԼ – Պետք չէ, մամ ջան, լաց մի լինի, ցավդ տանեմ...

ՄԱԹԵՆԻԿ – Սպասիր... Եթե ծախել ես ամեն ինչ ու հիմա էլ քո սուրբ հիշատակներն ես ուզում ծախել... Ուրեմն դու էս տան երեսը չես տեսնի երբեք: Ես լինեմ, թե չլինեմ: Երբեք:

ՄԱՆՎԵԼ – Էդ ո՞նց, է, վառելու ե՞ս...

ՄԱԹԵՆԻԿ – Չեմ վառելու: Ես էլ էգուց, հենց էգուց, իմ կտակն եմ գրելու մի մարմար քարի վրա ու բերելու եմ կպցնեմ հենց էս տան դռան վերևում: Ու վրան գրելու եմ.

«Էս տունը վաճառքի ենթակա չէ: Եթե իմ ժառանգները կգան ապրելու այս տանը և ծխեցնելու իրենց հայրական օջախը՝ բարի վայելում և մեր սուրբ օրհնությունը: Իսկ եթե փորձեն վաճառել այս տունը, որ իմ հանգուցյալ ամուսին Մարկոս Մելիքյանը և ես կառուցեցինք նյութական մեծ ծախսերով և չարչարանքով բազում, ապա թող անիծյալ լինեն նրանք և տունն այս թող դառնա մանկապարտեզ Հոնուտ գյուղի երեխաների համար: Ամեն»:

ՄԱՄՎԵԼ – Մամա, մամ ջան...

*(Մթնեցում)*

### **ՊԱՏԿԵՐ ՅՈՒԹԵՐՈՐԴ**

*(Գյուղի մրգի պահեստը: Լևոնը նստած հաշվարկներ է անում, մազնիտոֆոնով երաժշտություն է լսում: Ներս է մտնում Աշոտը):*

ԱՇՈՏ – Վայ, Լևոն ջան, վա՛յ, մինչև հիմա որ ասում էին, չէի հավատում: Մարդիկ որ շատ են մեծանում, իսկականից երեխա են դառնում, հա՛ :

ԼԵՎՈՆ – Ո՞վ:

ԱՇՈՏ – Էս մեր Տիգրան ապերը: Կարտոֆիլի համար փոս է փորել, հողը կիտել է կողքին ու կանգնել է մոլորված: Ասում եմ, Տիգրան ապեր, էդ ի՞նչ ես միտք անում: Ասում է, այ բալա, չեմ իմանում, թե էս հողն ինչ անեմ: Ի՞նչ պիտի անես, ասում եմ, մի փոս էլ փորի, էդ հողը մեջը լցրու: Այ տղա, ասում է, ոնց էլ խելքս չէր կտրում:

Կարծեցի կատակիս կատակով է պատասխանում, շուռ եկա, որ ավտոս նստեմ, մեկ էլ ձեն է տալիս՝ «Աշո՛տ, Աշոտ»: Ի՞նչ է, ասում եմ, Տիգրան ապեր: Ասում է՝ բա որ էդ փոսը փորեմ, հողը լցնեմ մեջը, էդ փոսի հո՞ղն ինչ անեմ...

ԼԵՎՈՆ - *(Ծիծաղում է)* Ինքն է քո հոգու հետ խաղացել, այ տղա:

ԱՇՈՏ – Չէ, լուրջ, լուրջ...

*(Երկուսն էլ ծիծաղում են)*

ԼԵՎՈՆ – Բայց որ ճիշտն ասենք՝ սա իսկի ծիծաղելու բան չի, Աշոտ, լաց լինելու բան է: Ախր ութսուն տարեկան Տիգրան ապերն ինչի՞ պիտի աշխատի, ինչի՞ պիտի փոս փորի...

ԱՇՈՏ – Բա ի՞նչ անի, եթե տանն ուրիշ աշխատող չկա: Քեզ նման տասնմեկ երեխա չունի: Լավ է, որ հիմա գոնե մի քիչ թոշակ է ստանում: Առաջ էդ էլ չկար, չէ՛ ... Հաստատ,

Տիգրան ապոր համար են ասել՝ չկա չարիք առանց բարիքի. Եթե քաղաքում ապրող տղան կնկանից չբաժանվեր, հիմա Նազիկն էլ Տիգրան ապոր կողքին չէր լինի:

ԼԵՎՈՆ – Տասը երեխա արժի Նազիկը: Տասը երեխա... Հրաշք աղջիկ է...

ԱՇՈՏ – Էն պիժոնը վերջերս չի երևում, չէ՞ ...

*(Աննկատ հայտնվել է Արայիկը, բանալին ձեռքին)*

ԱՐԱՅԻԿ – Բարև ձեզ...

ԼԵՎՈՆ – Անունը տուր... Բարև...

ԱՇՈՏ – Սալյուտ...

ԱՐԱՅԻԿ – Չէի՞ք ասի, որտեղ գտնեմ Նազիկին...

ԼԵՎՈՆ – Այ տղա, դու Նազիկից ի՞նչ ես ուզում:

ԱՐԱՅԻԿ - *(Բղավոցով)* Իսկ դո՛ւք ինձնից ի՞նչ եք ուզում, ի՞նչ... Բավական է, էլի... Ինչո՞ւ եք խառնվում իմ անձնական գործերի մեջ: Ես իրավունք չունե՞մ Նազիկին հանդիպելու... Ամեն անգամ այնպես վախվիսելով եմ մոտենում ձեզ, ոնց որ հանցագործ լինեմ, իսկ դուք էլ դատախազ: Ինձ հետ այնպես եք խոսում, ոնց որ... ասես թե Նազիկի հայրը լինեք...

ԼԵՎՈՆ – Իսկ ես Նազիկի հայրն եմ որ կամ:

ԱՐԱՅԻԿ – Նա հայր չունի, ավելի ճիշտ՝ նրա հայրը Երևանում է... ինքն է ասել:

ԼԵՎՈՆ – Ես նրա հայրն եմ:

ԱՐԱՅԻԿ – Հետաքրքիր մարդ եք, տասնմեկ երեխան քի՞չ է ձեզ, որ հիմա էլ Նազիկին եք տեր դառնում: Ինքնակոչ հայր չէինք տեսել, տեսանք... Իսկական հայրը հրաժարվում է... Խեղճ աղջիկը երեք տարի հանրակացարանում էր ապրում, իսկ...

ԱՇՈՏ – Լսիր, լսիր, տղա... ինձ լսիր...

ԱՐԱՅԻԿ – Իսկ դո՞ւ ով ես, է...

ԱՇՈՏ – Ե՛ս... Ես Նազիկի եղբայրն եմ, ու եթե ձայնդ չիջեցնես...

ԱՐԱՅԻԿ – Եղբայրը՞ ...Լսեք, դուք ինձ լրիվ ձեռք եք առնում, ինչքան որ ես ու Նազիկն իրար գիտենք, երկուսս էլ որբեր ենք: Հիմա բանից դուրս է գալիս, որ Նազիկը հայր էլ ունի, եղբայր էլ ունի...

ԱՇՈՏ – Ոչ թե եղբայր... այլ եղբայրներ, քույրեր, մորաքույրներ ու հորաքույրներ, հորեղբայրներ ու քեռիներ... Էս գյուղում բոլորը նրա հարազատներն են:



ԱՐԱՅԻԿ – Եվ ի՞նչ են ուզում ինձնից նրա բոլոր հարազատները... թույլ տվեք իմանալ...

ԼԵՎՈՆ – Ուզում են, որ դու հանգիստ թողնես նրան:

ԱՐԱՅԻԿ – Հա, բայց ինչո՞ւ... Պրոֆիլը ձեզ դուր չի՞ գալիս...

ԱՇՈՏ – Պրոֆիլը էլ, անֆասդ էլ... Որովհետև ամեն անգամ քո գնալուց հետո ոնց որ թուլանան նրա ձեռքերը, հասկանո՞ւմ ես... Կոտրվում է միանգամի՞ց...

ԱՐԱՅԻԿ - *(Հեզնանքով)* Հա, հա...

ԱՇՈՏ – Հա ու հիմի ասել էի, հա՛... Մի քանի օր ուշքի չի գալիս, հետը խոսել չի լինում... Ի՞նչ ես ամեն անգամ գալիս ու պղտորում աղջկա սիրտը...

ԱՐԱՅԻԿ – Աշոտ ջան, ճիշտ ես ասո՞ւմ... Ճիշտ ես ասո՞ւմ, ցավդ տանեմ... Ուրեմն նա ինձ հիշում է... Ուրեմն նա ինձ...

ԱՇՈՏ – Իսկ դու ախպերս ե՞ս, որ հանաք անեմ հետդ...

ԼԵՎՈՆ – Արայիկ, ինձ լսիր, եթե դու ֆիատի բանալին ձեռքիդ ֆոֆոացնող դատարկ-մատարկ տղա ես, ձեռք քաշիր նրանից ու բարով-խերով գնա քո ճանապարհով: Իսկ եթե լուրջ ու կարգին տղա ես, ինչպես Նազիկն է կարծում, ապա ուրեմն լուրջ էլ մտածիր: Նա էստեղից չի կարող գնալ: Ծեր, անօգնական պապ ունի... տուն ունի, աշխատանք ունի...

ԱՐԱՅԻԿ – Ախր թողնո՞ւմ եք, որ բերանս բացեմ... Սպասեք, էլի... Ախր եթե նա ինձ սիրում է...

ԱՇՈՏ – Հետաքրքիր տղա ես, աչք չունե՞ս, արա... այսինքն՝ Արայիկ...

ԱՐԱՅԻԿ – Աչք ունեմ, ինչք չունեմ, ինչք... Խելքս թոցրել է Նազիկը: Ախր հետս ոչ մի անգամ լուրջ չի խոսում... Ծաղրում է անընդհատ...

ԱՇՈՏ – Իսկ դու նրան ի՞նչ լուրջ բան ես ասել, որ չի պատասխանել...

ԱՐԱՅԻԿ – Այսինքն, որ մտածում եմ... *(խիստ)* Որտե՞ղ է Նազիկը...

*(Լևոնն ու Աշոտը ծիծաղում են)*

Իսկ որ մնամ, աշխատանքի տեղ կգտնվի՞... առանց կատակի...

ԼԵՎՈՆ – Առանց կատակի ես իմ տեղը կտամ քեզ, իմ տեղը... Մենակ թե եկեք, աշխատեք, մարդ աստծո... Բհարկե, տանձի ու խնձորի ծառերը իրարից տարբերելուց հետո...

ԱՐԱՅԻԿ – Վա՛յ, էն անգամ ես իսկապես շփոթվեցի, Լևոն քեռի...

ԼԵՎՈՆ – Գիտեմ, գիտեմ, Արայիկ...

ԱՐԱՅԻԿ – Դե ուրեմն, մնում է միակ հարցը - որտե՞ղ է Նազիկը... Խիղճ ունեք, տեղն ասեք...

ԱՇՈՏ – Այ, հիմա արի իմ ավտոյով առոք-փառոք նրա մոտ տանեմ, ախպերս...

*(Լևոնին)* Հը, արժի՞, բրիգադիր...

ԼԵՎՈՆ – Հը՞ ... Կարծես թե արժի, Աշոտ...

*(Աշոտն ու Արայիկը ծիծաղելով հեռանում են: Ներս է մտնում Սեկոյանը)*

ՍԵԿՈՅԱՆ – Էս ի՞նչ էք անում, Լևոն, պահածոների գործարանից զանգ տվեցին, բողոքում են: Միրգ չի գնում:

ԼԵՎՈՆ – Ես ի՞նչ անեմ, հոգուդ մեռնեմ – միրգը մի կազմակերպություն է, ավտոն մի ուրիշ, գործարանն էլ բոլորովին ուրիշ: Ինչի՞ պետք է գործարանը ավտո չունենար, որ գար ինքը տաներ...

ՍԵԿՈՅԱՆ – Դա հարցի լուծում չէ, եղբայր, մենք պետք է մեր գործարանն ունենանք, մենք, որ ոչ մեկից կախում չունենանք:

ԼԵՎՈՆ – Ե՞րբ...

ՍԵԿՈՅԱՆ – Գործկումը հաստատել է, հիմա հարցը մինիստրությունից է կախված... կլինի, կլինի... Բայց մինչև լինի...

ԼԵՎՈՆ – Ախր գոնե հեռախոս ունենայի, ավտոպարկի հերը կանիծեի... Էդ մեկն իսկի ձեզանից չէ, ընկեր Սեկոյան, ինչի՞ պետք է հիմա ամեն մի կետում, ամեն մի տան մեջ հեռախոս չլիներ... Կոլեկտիվացման ժամանակ էլ՝ էդ մի հեռախոսն է եղել և էդ մի Եվուկը...

ՍԵԿՈՅԱՆ - *(Ծիծաղում է)* Կամոն որտե՞ղ է...

ԼԵՎՈՆ – Ո՞ր Կամոն...

ՍԵԿՈՅԱՆ – Քո տղան, քո տղան, Կամինսկի-Ասլանյանը...

ԼԵՎՈՆ – Նրան ով է տեսնում, այ ցավդ տանեմ, օրերով Երևանում է լինում: Հա, մերն ասաց, որ էլի Երևան է գնացել...

ՍԵԿՈՅԱՆ – Ավտոմատ կայանի գործով է զբաղված, Լևոն... Կապի մինիստրություն եմ ուղարկել նորից: Շատ ճարպիկ տղա ունես... Հաջողացնում է... ամենանոր սիստեմի...

ԼԵՎՈՆ – Ճի՞շտ...

ՍԵԿՈՅԱՆ – Բայց որ անկեղծ ասեմ, Եվան է մեղքս գալիս... Նա այդ կայանում այլևս անելիք չի ունենա...

ԼԵՎՈՆ – Է՛, բոլորս էլ կամաց-կամաց հնանում, մաշվում ենք, ախպերս... Իսկ ցավոք սրտի, փոխարինողներ չկան...

ՍԵՎՈՅԱՆ – Չկա՛ն... Ով որ ժամանակին գնացել է, ես համարյա թե չեմ մեղադրում, Լևոն: Դե հասկացանք՝ պատիվ, պարտականություն, խանդավառություն... հասկացանք: Բայց հո չի՞ կարելի ամբողջ կյանքում խանդավառությամբ քաղցած մնալ: Գյուղացուն չէին թողնում կով պահել, չէին թողնում ոչխար պահել: Չէին շահագրգռում...

Իսկ հիմա... Ես հո ամբիոնից չեմ խոսում, բայց ազնիվ խոսք, երբեք գյուղացու համար աշխատանքի ավելի լավ պայմաններ չեն ստեղծվել, քան այս վերջին տարիներին: Անասուն պահիր, որքան սիրտդ ուզում է... աշխատիր ու ստացիր, որքան պատում է ուժդ... Պետությունն ինքն է օգնում, ինքն է վարկավորում, ինքն է շահագրգռում: Էլ ի՞նչ եք ուզում... Բայց էլի մարդիկ կան, որ իրենց օգուտը չեն հասկանում... Էլի մարդիկ կան, որ թողնում գնում են...

ԼԵՎՈՆ – Էդպես է, ընկեր Սեկոյան, բայց ամենավատը էն չէ, որ մի երկու հոգի թողնում գնում են: Դրանից մի մեծ վնաս չկա, կգնան, կկարոտեն, էլի կգան: Էդ ամառանոցների կոփվը հողի կարոտից չէ՞: Բայց գնացեք տեսեք, թե ինչ են անում:

Հողամասը վերցնում են, հսկա պարիսպ են քաշում, տուն են սարքում, ծառեր տնկում ու թողնում գնում: Մի ամիս հետո ծառերը չորանում են և պրծավ...

Որովհետև աշխատելն են մոռացել, այ թե վատը որն է: Խամացել են հողից: Հիմա դուք կովը տալիս եք, բայց մարդիկ գում չունեն՝ կով պահելու համար, բոլոր գումերը գարածներ են դարձրել: Կովը տալիս եք, բայց կթող չկա, է՛, կթող, կով կթելը մոռացել են, ոչխար պահելը մոռացել են... Իսկ հիշելու համար ժամանակ է պետք... Էնպես որ էլի պիտի համբերել... ու սովորեցնել կամաց- կամաց, ինչպես որ երեխաներին են սովորեցնում...

*(Հնկին ներս են ընկնում Աստղիկն ու Գագիկը)*

ԱՍՏՂԻԿ – Վա՛յ, բարև ձեզ... Հայրիկ, հայրիկ ջան, ընդմիջում է, մագնիտոֆոնդ տուր տանենք նվագենք ու պարենք մի քիչ, էլի...

ԼԵՎՈՆ – Այ տղա, մի էստեղ արի...

ԳԱԳԻԿ – Լսում եմ, հայրիկ ջան...

ԼԵՎՈՆ - *(Հեզմանքով)* Հայրիկ ջան... Այ տղա, դու ինչո՞ւ մորդ չես լսում:

ԳԱԳԻԿ – Ե՛ս... Ես ինչ եմ արել, որ...

ԼԵՎՈՆ – Դիտմամբ, այ դիտմամբ ընկեր Սեկոյանի մոտ եմ ասում, որ ամոթից գետինը մտնես: Դու էդ քանի՞ զլուխ ունես, որ մերդ ասում է՝ ցախ ջարդի տոմատ եփելու համար, իսկ դու թողնում ծլկում ես տնից:

ԳԱԳԻԿ – Ե՞րբ, հայրիկ ջան:

ԼԵՎՈՆ – Երեկ... Եկա տեսա քնած էիր, թե չէ քո դատաստանը հենց գիշերը կտեսնեի:

ԳԱԳԻԿ – Երե՞կ... Մայրիկն ինձ բան չի ասել, հայրիկ ջան...

ԼԵՎՈՆ – Ո՞նց թե չի ասել...

ՍԵԿՈՅԱՆ – Գուցե հոգուդ մեղք էս անում, Լևոն, գոնե սկզբից հարցնեիր՝ էս ո՞ր մեկն է, ո՞ր մեկն է...

ԼԵՎՈՆ – Է, որ եղպես հարցնում եմ, կատակ եմ անում, կարծում եք չեմ ճանաչո՞ւմ...

ԱՍՏԴԻԿ – Հաստատ շփոթում եք, հայրիկ...

ԼԵՎՈՆ – Ե՞ս... Մեկ էլ քեզ եմ շփոթում, Սաթիկ աղջիկ ու չգիտեմ, որ աշխարհն էլ իրար խառնվի, դու պիտի եղբայրներիդ պաշտպանես...

ԳԱԳԻԿ - *(Վեր-վեր է թռչում)* Խառնեցիր, խառնեցիր...

ԼԵՎՈՆ – Որի՞ դ խառնեցի, Պետիկ տղա...

ԱՍՏԴԻԿ - *(Քրքջալով)* Երկուսիս էլ...

ԼԵՎՈՆ – Վերջ տվեք...

ԳԱԳԻԿ – Ես Գագիկն եմ, հայրիկ ջան, բայց, մեկ է, Պետիկին էլ չարժե պատժել, որովհետև առավոտ շուտ ցախը ջարդեց, նոր այգի եկավ:

ԱՍՏԴԻԿ – Ես էլ թեն Սաթիկը չեմ, բայց պիտի պաշտպանեմ եղբորս, Գագիկը ճիշտ է ասում...

*(Մագնիտոֆոնը վերցնում, ծիծաղելով դուրս են գնում: Ծիծաղում է նաև Սեկոյանը):*

ԼԵՎՈՆ – Քիչ է մնում էդ ջան լակոտների ոտքերից տարբեր գույնի թելեր կապեմ ու հետները խոսելուց առաջ մեկ-մեկ ստուգեմ... Գժվեցրին ինձ...

ՍԵԿՈՅԱՆ - *(Ծիծաղում է)* Մեկ է, էլի կխառնես, Լևոն: *(Նկատում է դռան մեջ կանգնած կնոջը)*  
Գոհա՞ր...

ԳՈՀԱՐ – Բարև ձեզ, ես եմ, ես...

ՍԵԿՈՅԱՆ - Ի՞նչ է պատահել, Գոհար...*(Անհանգստացած)* Ի՞նչ կա...

ԳՈՀԱՐ – Անպայման պետք է որևէ բա՞ն պատահի, որ ես տեսնեմ քեզ...

ԼԵՎՈՆ – Ընկեր Սեկոյան, ներողություն, բայց ես գնամ ավտոպարկ զանգահարեմ, հա՞...  
Խայտառակ եղանք: Ներողություն, հարս ջան...

(Շուրս է գնում)

ՄԵԿՈՅԱՆ – Հա, հա... Գոհա՞ր, իսկապէս, հո որևէ բան չի՞ պատահել, Գոհար ջան:

ԳՈՀԱՐ – Ամաչում էի՞ր ուրիշի մոտ ասես Գոհար ջան...

ՄԵԿՈՅԱՆ – Ինչէր ես հորինում:

ԳՈՀԱՐ – Հետո՞...

ՄԵԿՈՅԱՆ – Ի՞նչը հետո...

ԳՈՀԱՐ – Մինչև ե՞րբ պետք է այսպէս շարունակվի:

ՄԵԿՈՅԱՆ – Ոչինչ չեմ հասկանում, ի՞նչը շարունակվի...

ԳՈՀԱՐ – Մեր այս անբնական ամուսնական կյանքը:

ՄԵԿՈՅԱՆ – Ամոթ ինձ, թե որևէ բան եմ հասկանում... Մեր ամուսնական կյանքը՞... Ինչո՞ւ է անբնական:

ԳՈՀԱՐ – Ուրեմն դու շա՞տ բնական ես համարում այն վիճակը, որ տուն ես գալիս, երբ մենք քնած ենք լինում և տնից գնում ես, երբ քնած ենք լինում:

ՄԵԿՈՅԱՆ – Բայց ես ի՞նչ կարող եմ անել: Ես ինչպե՞ս կարող եմ բացակայել գյուղից, որի կողմնակցության նախագահն եմ բարով-խերով: Եթե կուզես իմանալ, սիրելի կին, անբնականն այն է, որ ամեն օր շրջկենտրոն եմ հասնում՝ քնելու համար: Այնինչ այստեղ գիշերն էլ հազար ու մի գործ կա...

ԳՈՀԱՐ – Ի՞նչ ես ասում: Գիշերներն էլ, հա՞:

ՄԵԿՈՅԱՆ – Իսկ դու չգիտե՞ս, ինչ է...

ԳՈՀԱՐ – Իսկ ինչո՞ւ գյուղում չես մնում:

ՄԵԿՈՅԱՆ – Ե՞ս... Եվ այդ դո՞ւ ես հարցնում...

ԳՈՀԱՐ – Բա ո՞վ պետք է հարցնի:

ՄԵԿՈՅԱՆ – Չէ, սրան ինչ-որ բան է պատահել: Այ Գոհար, դու ինձ կթողնե՞ս գյուղում մենակ մնալ:

ԳՈՀԱՐ – Իսկ ինչո՞ւ ես ուզում անպայման մենակ մնալ:

ՄԵԿՈՅԱՆ – Մարդ կխելագարվի... Բա ո՞ւմ հետ մնամ...

ԳՈՀԱՐ – Ինձ հետ...

ՄԵԿՈՅԱՆ – Քեզ հե՞տ...

ԳՈՀԱՐ – Իհարկե...

ՄԵԿՈՅԱՆ – Քեզ հետ... Եվ դու գյո՞ւղ կգաս:

ԳՈՀԱՐ – Իսկ ինչո՞ւ չեմ գա...

ՄԵԿՈՅԱՆ – Հիմա ես ի՞նչ անեմ, որ հանգիստ խոսեմ... Լսիր, Գոհար ջան, հոգիս, երա՞զ ես տեսել, թե ինչ-որ բան է պատահել, որից հիշողությունդ միանգամից կորցրել ես:

ԳՈՀԱՐ – Ես ամեն ինչ էլ հիանալի հիշում եմ...

ՄԵԿՈՅԱՆ – Բա եթե հիշում ես, ես քեզ քանի՞-քանի անգամ եմ խնդրել, որ միասին գյուղ գնանք:

ԳՈՀԱՐ – Ե՞րբ:

ՄԵԿՈՅԱՆ – Չե՛ր, ես կխելագարվեմ: Դու ճիշտ օ՞րն ես ուզում իմանալ: Ե՞րբ են ինձ այս աշխատանքն առաջարկել, անցյալ տարվա սեպտեմբերի հինգի՞ն, ուրեմն հինգին, վեցին, յոթին, ութին, իննին, տասին, տասնմեկին, մինչև որ հոգնել եմ ու որոշել այլևս ձայն չհանել: Եվ դու ինձ հարցնում ես՝ ե՞րբ...

ԳՈՀԱՐ – Ոչինչ չեմ հիշում:

ՄԵԿՈՅԱՆ – Չես հիշո՞ւմ: Չե՞ս հիշում, որ ասում էիր՝ ես երաժշտական դպրոցում դաս եմ տալիս, ինչպե՞ս գյուղ գամ:

ԳՈՀԱՐ – Բայց դա ի՞նչ պատճառաբանություն է:

ՄԵԿՈՅԱՆ – Ի՞նչն է ինչ պատճառաբանություն...

ԳՈՀԱՐ – Որ իբրև թե երաժշտական դպրոցում դաս տալու պատճառով կարելի է գյուղ չգալ, հարազատ ամուսնու մոտ...

ՄԵԿՈՅԱՆ - *(Բռնում է գլուխը)* Գլո՞ւխս... Եվ այդ հարցը դո՞ւ ես ինձ տալիս...

ԳՈՀԱՐ – Ոչ, դու պետք է ինձ տայիր: Դո՞ւ... Թեև ես իսկապես չեմ հիշում, որ նման անմիտ պատճառաբանություն բերած լինեմ: Եթե զինվորական լինեիր ու քեզ ուղարկեին, ասենք, Կամչատկա, ես քեզ հետ չպե՞տք է գայի...

ՄԵԿՈՅԱՆ – Գլուխս այլևս չի աշխատում: Դու չե՞իր ասում, թե ինչպես գամ, Արմենն այս տարի դպրոց է գնալու:

ԳՈՀԱՐ – Իսկ Հոնուտում դպրոց չկա՞, ինչ է:

ՄԵԿՈՅԱՆ – Կա, բայց դու ասում էիր, թե շրջկենտրոնի ուսուցիչները...

ԳՈՀԱՐ – Սուրեն, ես իսկապես սկսում եմ անհանգստանալ քեզ համար: Ես ինչպե՞ս կարող էի վատ բան ասել Հոնուտի դպրոցի մասին, երբ այստեղ ընկեր ժենյա կա...

ՄԵԿՈՅԱՆ – Ուրեմն չե՞ս ասել:

ԳՈՀԱՐ – Չէ...

ՄԵԿՈՅԱՆ – Լավ, հիմա ի՞նչ ես ասում... Ինչո՞ւ ես եկել, ասա... Ուրեմն բանից պարզվում է, որ դու Արմենի հետ ուզում ես Հոնուտ գալ և ապրել ինձ հետ միասին, իսկ ես դեմ եմ, հա՞...

ԳՈՀԱՐ – Փաստորեն այդպես է ստացվում:

ՄԵԿՈՅԱՆ – Կներես, որ մի անգամ էլ հարցնեմ... Հիմա դուք ուզում եք գալ Հոնո՞ւտ:

ԳՈՀԱՐ – Իհարկե...

ՄԵԿՈՅԱՆ – Ճի՞շտ, Գոհար ջան, ճի՞շտ, ցավդ տանեմ: Ախր դա իմ երազն էր և ես հույսս լրիվ կորցրել էի...

ԳՈՀԱՐ – Ուրեմն երազդ կատարվեց:

ՄԵԿՈՅԱՆ – Իսկ ե՞րբ եք ուզում գալ:

ԳՈՀԱՐ – Հենց վաղը: Ինքդ էլ կգաս ու մեզ կբերես...

ՄԵԿՈՅԱՆ – Վաղը՞... Բայց որտե՞ղ ենք ապրելու: Ես այստեղ տուն չունեմ: Ավելի ճիշտ՝ երբ հույսս քեզանից կտրեցի, ինձ հատկացված բնակարանը տվեցի Լևոնի ամուսնացած որդուն: Տեղ չունեին խեղճերը...

ԳՈՀԱՐ – Ես այդպես էլ գիտեի... պատճառաբանությունները սկսվեցին...

ՄԵԿՈՅԱՆ – Ի՞նչ պատճառաբանություն... Չէ, չէ, ոչ մի պատճառաբանություն... Ոչ մի... Ես այսօր մի բան կմտածեմ... Մի բան կձարեմ... Ի՞նչ ես ասում... Հա, իսկ դու ի՞նչ պետք է այստեղ անես, Գոհար ջան, այստեղ երաժշտական դպրոց...

ԳՈՀԱՐ – Հիմա էլ նոր պատճառաբանություն... Տեսնո՞ւմ ես, որ ամեն ինչ անում ես մեր գալը խափանելու համար... Լավ, դա ի՞նչ պրոբլեմ է քեզ համար, ընկեր նախագահ, մի սովորական դաշնամուր չե՞ք կարող առնել, որպեսզի ես երեխաներին դաշնամուր նվագել սովորեցնեմ...

ՄԵԿՈՅԱՆ – Հա, ճիշտ որ... ինչ դաշնամուր, մենք հիանալի ռոյալ ունենք Գոհար ջան: Ես իսկապես կորցրել եմ ինձ... ես չգիտեմ, թե ինչ է կատարվել, ես չգիտեմ, թե այս պատմությունն ինչից է սկսվել: Ես չգիտեմ, թե դու ինչ խաղ ես հորինել և չեմ էլ ուզում իմանալ: Ես երջանիկ եմ, հավատա, ամաչում էի մարդկանցից իմ վիճակի համար: Հավատա, չէի համարձակվում որևէ մեկին նախատել գյուղից փախչելու համար, որովհետև նա հանկարծ կարող էր հարցնել, թե դո՞ւ ինչու գյուղում չես ապրում, քո

կինն ու երեխա՞ն ինչու գյուղում չեն ապրում: Այնպես որ հիմա ես շատ-շատ երջանիկ եմ ու շնորհակալ եմ քեզ, Գոհար ջան, և հենց հիմա վագում եմ մի տուն գտնելու:

Հենց հիմա...

ԳՈՀԱՐ – Դե, ես էլ գնամ՝ կամաց-կամաց հավաքեմ իրերը... Թե՞ կարող է նորից մտադրությունդ փոխես...

ՍԵԿՈՅԱՆ – Ե՞ս... Նորի՞ց... Դե լավ, լավ, քո ասածն է, քո ասածը... *(Մեկուսի)* Է՞ս ինչ հրաշք էր... *(Դուրս է գնում)*:

ԳՈՀԱՐ - *(Օրհնադուր է)* Հայհամե՛րգ... Չէ, հույս չունենաս, թե նոր երգեր կլսես, սիրելի ամուսին: Սրանից հետո ես այդ հնարավորությունը քեզ երբեք չեմ տա:

Մտքովդ չանցնի:

### **ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ**

*(Հեռախոսակայանը: Ոչ ոք չկա: Հեռախոսը զանգում է: Ներս է մտնում Եվան)*

ԵՎԱ – Եկա, եկա... Գալիս եմ... Հա... Այո, լսում եմ, Գրետա ջան... ընկեր Սեկոյանը այգիներում է, քիչ առաջ զանգ տվեցի: Անպայման, անպայման... «Մևան» ընկերությունն... Միացրու: Լսում եմ, ընկեր Թևանյան... Եվուկն է: Աշոտի՞ն... Ե՞րբ, էգո՞ւց... Այ ցավդ տանեմ, նրա վրա հալ կա՞, որ մրցումների մասնակցի... գիշեր-ցերեկ աշխատում է... Կամ բերքահավաքի էս թեժ ժամին մարդուն գործից կկտրեն, թե գնա վազի՞... ամբողջ օրը վագում է, էլի... Ո՞նց թե իմ գործը չի... Բա էդ քեզ սազե՞ց, ընկեր Թևանյան: Դե որ իմ գործը չի, դուք էլ նրան գտեք ու վագացրեք...

*(Ցած է դնում լսափոռը: Նորից զանգ, վերցնում է)*

Այո, հա, Գրետա ջան, վերջացրինք... Մինիստրությունի՞ց... Մեր կոնսերվի գործարանի համա՞ր: Հենց հիմի, հենց հիմի, Գրետա ջան...

*(Կախվում է լուսամուտից)*

Աղջիկ ջան, աղջիկ ջան... քեզ հետ եմ: Վայ, վայ, վայ, տղա ե՞ս, հոնքերդ մի կիտի, տղա ջան, այքերս լավ չեն տեսնում... Մազերդ խաբեցին... Տղա ջան, մի վազի այգիները, քեզ մատաղ, ընկեր Սեկոյանին քարտուղարն է հարցնում...

*(Ներս է մտել Սեկոյանը)*

ՍԵԿՈՅԱՆ – Քարտուղարը՞...

ԵՎԱ – Վա՞յ... Մի վազի, մի վազի, աղ... տղա ջան:



ՄԵԿՈՅԱՆ – Իմ հեռախոսը չի աշխատում, Եվա, այստեղից միացրու...

*(Ներս է մտնում Ժենյան)*

ԺԵՆՅԱ – Բարև ձեզ, ընկեր Սեկոյան, բարև ձեզ, Եվա...

ՄԵԿՈՅԱՆ – Բարև, ընկեր Ժենյա... Ինչպե՞ս եք...

ԺԵՆՅԱ – Շնորհակալություն, հիանալի... Եվա ջան, մի ծրար տուր, նամակ եմ գրում Ադիլիս:

ՄԵԿՈՅԱՆ – Իմ կողմից էլ, այսինքն ամբողջ գյուղի անունից ջերմ-ջերմ բարևներ ուղարկեք հարգելի ակադեմիկոսին, ընկեր Ժենյա...

ԺԵՆՅԱ – Հաճույքով, Ադիլիս շատ-շատ կուրախանա...

*(Նստում է սեղանի մոտ, սկսում է գրել)*

ԵՎԱ – Այո, շրջկենտրոն, Գրետա ջան, մի քարտուղարին միացրու, հենց ապրես, ընկեր Սեկոյանը կողքիս է: Այո՞, խոսեք, ընկեր Սեկոյան...

ՄԵԿՈՅԱՆ – Լսում եմ, ընկեր Մարտիրոսյան, ամեն ինչ նորմալ է... Բոլոր գծերով անցել ենք... Դե, իհարկե... Ինչպե՞ս... Լևոն Ասլանյանի՞ն... Միանգամայն արժանի է, ընկեր Մարտիրոսյան... Ես նրա ամբողջ ընտանիքին հերոսի կոչում կտայի... Մեծախոսություն չհամարեք... ազգ բարձրացնող մարդ է... *(ծիծաղում է)* Դե չէ... դե դա ջահելության մեղք է... այն էլ ամենաբարեհաջող ավարտով...

Առանց նրա մեր հեռախոսային կայանը գլուխ չէր գա... Շատ շնորհակալություն... Թող գան, ընկեր Մարտիրոսյան, պահածոների գործարանի տեղը մենք արդեն որոշել ենք՝ գետի ափին... Թող գան տեսնեն... Ես միշտ այստեղ եմ, ընկեր Մարտիրոսյան... Եվ սրանից հետո՝ զիջերներն էլ... Այո, Գոհարն ու երեխան էլ են գալիս: *(Ծիծաղում է)* Չեմ հասկանում...

ԵՎԱ - *(Մեկուսի)* Որտեղից պիտի հասկանաս...

ՄԵԿՈՅԱՆ – Հենց այդպես, միանգամից... Չէ, նույնիսկ ինքն է ստիպում... Ու հիմա չգիտեմ ինչ անել: Ես իմ բնակարանն ախր ուրիշի եմ տվել, հո նորից դուրս չեմ անելու: Դե, մինչև նորը կառուցեն, մի բան կմտածեմ, ընկեր Մարտիրոսյան: Շատ-շատ շնորհակալություն:

*(Ցած է դնում լսափողը, մտաճոգ է)* Եվա, դպրոցի մոտի տունն էլի փա՞կ է:

ԵՎԱ – Հա, ընկեր Սեկոյան, արդեն մի տարի է, ինչ փակ է: Մեկ-մեկ Միմոնն էր գալիս, մշակում այգին, բայց որ մեռավ, էլ ոչ ոք չի գալիս:

ՄԵԿՈՅԱՆ – Նրա տղայի հեռախոսի համարը գիտե՞ս, Եվա:

ԵՎԱ – Գիտեմ, բա ո՞նց... Իսկ նրա համարն ի՞նչ եք անում...

ՍԵԿՈՅԱՆ – Դե եթե չեն բնակվում, գուցե վարձով տան ինձ, մինչև որ... Ախր Գոհարը գալիս է, ուզում է այստեղ աշխատել...

ԺԵՆՅԱ – Ի՞նչ եք ասում, շնորհավորում եմ... Ես շատ ուրախ եմ ձեզ համար...

ՍԵԿՈՅԱՆ – Շնորհակալություն, ընկեր Ժենյա... Գոհարը ասում է՝ իմ Արմենը պետք է միայն ընկեր Ժենյայի մոտ սովորի...

ԺԵՆՅԱ – Սիրով, սիրով, սիրելիս...

ԵՎԱ – Ընկեր Սեկոյան... ինչի՞ եք ուրիշի խնդրում... Եկեք մեր տանն ապրեք, էլի...

ՍԵԿՈՅԱՆ – Ձեր տանը՞:

ԵՎԱ – Մեր տանը, ընկեր Սեկոյան, երեք սենյակ է, ես մեն-մենակ... Դուք վերևի հարկում առանձին կապրեք ձեզ համար...

ՍԵԿՈՅԱՆ – Բայց ձեզ չե՞նք խանգարի...

ԵՎԱ – Ե՛ս կաշխատեմ չխանգարել ձեզ, ընկեր Սեկոյան:

ՍԵԿՈՅԱՆ – Շատ շնորհակալություն, Եվա... Դու ինձ փաստորեն փրկում ես... Գոհարը երկու ոտքը մի մաշիկում է դրել, թե վաղը, հենց վաղը... Չգիտեի ինչ անել... Իսկ վարձի համար...

ԵՎԱ – Եթե վարձի անուն եք տալու, Սիմոնի տղու համարը հավաքեմ...

ՍԵԿՈՅԱՆ – Չէ, չէ, Եվա, շատ-շատ շնորհակալություն...

ԵՎԱ – Այ էդպես... Դե հիմա գնացեք տեսեք ինչպես եք տեղավորվելու: Էս էլ ձեր բանալին, ընկեր Սեկոյան... Երկու անգամ կպտտեցնեք...

ՍԵԿՈՅԱՆ – Եղավ... Գնացի, Եվա...

*(Դուրս է գալիս: Ժենյան այս ամբողջ ժամանակամիջոցում լսում է նրանց խոսակցությունը)*

ԺԵՆՅԱ – Ձեր կողմից շատ մեծահոգի քայլ էր, Եվա... Ապրեք...

ԵՎԱ – Է, ասում ես, էլի, ուսուցչուհի...

ԺԵՆՅԱ – Ես էլ մի պահ ցանկացա առաջարկել... Բայց հանկարծ մտածեցի, որ Ադիկա ամեն վայրկյան կարող է անսպասելիորեն հայտնվել: Ախր նա մի քիչ խենթուկ է, չէ՞, Եվա... Մեկ էլ տեսար՝ հայտնվեց...

ԵՎԱ – Իհարկե, ընկեր Ժենյա:

ԺԵՆՅԱ – Եվա... Իսկ Վարդանը էլի գալի՞ս է...

ԵՎԱ – Գալիս է, ընկեր ժենյա, ամեն օր...

ԺԵՆՅԱ – Իսկ ի՞նչ էք կարծում, նախագահի ընտանիքի ներկայությունը նրան չի՞ խանգարի...  
Դե կին է, երեխա է, աղմուկ է...

ԵՎԱ – Չեմ կարծում, թե խանգարի...

ԺԵՆՅԱ – Դուք զարմանալի կին եք, Եվա... և միակը ինձ ծանոթ մարդկանց մեջ... Ինչպե՞ս կարողացաք երկար ու ձիգ տարիների միջով սրբությամբ տանել ձեր սերը... Ինչպե՞ս կարողացաք ամբողջ կյանքում, ինչպես ուստրեն իր մարգարիտն է թաքցնում, հավատարմորեն պահել-փայփայել ձեր վիշտը, ձեր ցավը, ձեր միայնությունը... Դուք հանուն սիրո անձնագոհության կենդանի օրինակ եք, Եվա...

*(Եվան լսում է նրան լուռ, կնճռոտված, մտքերի մեջ, դուրս է գալիս իր փայտե միջնորմի ետևից ու կանգնում ուսուցչուհու առաջ):*

ԵՎԱ – Քո խոսքերը շատ սիրուն են, ընկեր ժենյա: Բայց սուտ են:

ԺԵՆՅԱ - *(Ականջներին չհավատալով)* Ինչպե՞ս:

ԵՎԱ – Ես ոչ թե անձնագոհ սիրո, այլ փուչ ապրած կյանքի օրինակ եմ, ընկեր ժենյա, և երեկ գիշեր Վարդանն էլ ինձ նույն բանն ասաց: Վարդանը: Եվ դրա համար էսօր ես իմ տունն առաջարկեցի նախագահին:

Ի՞նչ եմ արել ես ամբողջ կյանքում: Վարդանի հիշատակն եմ պահել: Իսկ պարտադիր էր, որ իմ գոհված ամուսնու հիշատակը պահելու համար կույզ գայի ինքս իմ մեջ, խաչ քաշեի աշխարհի ու կյանքի վրա... Մպանեի ինձ էլ, իմ շարունակությունն էլ: Աշխարհում մենակ իմ ամուսինն էր գոհվել: Մենակ ե՞ս էի սիրում իմ ամուսնուն: Ուրիշ ոչ մեկը չէ՞ր սիրում: Եթե բոլոր-բոլոր գոհվածների կանայք ինձ նման անեին, աշխարհը հո անապատ կդառնար...

ԺԵՆՅԱ – Միրելի Եվա...

ԵՎԱ – Ուրեմն ո՞րն է իմ անձնագոհությունը... Ես անձնագոհ եմ, թե անձնասպան: Անձնագոհը ուրիշ մարդկանց համար է ապրում և ուրիշների համար է գոհվում: Իսկ ես ի՞նչ եմ արել ուրիշների համար, աշխարհի համար: Ի՞նչ եմ արել: Աստված ինձ մայր լինելու բախտավորությունն էր տվել, ես հրաժարվել եմ: Աստված ինձ սեր էր տվել, որ բաժանեմ մարդկանց: Ես վերցրել, թաքցրել եմ:

Բա Վարդանի հիշատակը հավերժացնելու համար ես չեի՞ կարող մի քանի որբերի պահել, մեծացնել, մի-մի Վարդան դարձնել աշխարհում: Ու նրա ազգանունը տալ անհեր-անմեր երեխաներին: Վարդանի ազգանունը:

ԺԵՆՅԱ – Եվա, սիրելի Եվա, ես այսօր չեմ ճանաչում քեզ...

ԵՎԱ – Ես էլ մինչև էսօր ինձ չէի ճանաչում: Բայց որ ճանաչեցի՝ ամաչեցի իմ դատարկ, անպտուղ կյանքի համար:

Երեկվա թերթում մի նկար կար: Մի դազախ կնիկ էր՝ իր տասնհինգ զավակներով շրջապատված: Երեխեքից ամեն մեկն իր ձեռքը մեկնել էր, որ մի կերպ դնի մոր ուսին, մի քանիսն էլ փեշի տակ էին ծվարել: Երեխա չէր ունեցել էդ դազախ կնիկը, մանկատներից որբեր էր հավաքել ու պահում էր...

Տասնհինգ երեխա մայրիկ են կանչում նրան: Ինձ ոչ մեկն աշխարհում մայրիկ չասաց... Ոչ մեկը... Կարծում ես պատահակա՞ն է, որ ինձ ուրիշների մի մատ երեխաներն էլ մայրիկ չեն կանչում: Բոլորն էլ ասում են Եվա... Եվա... Ու ճիշտ են անում: Ինձնից երևի մոր հոտ չի գալիս...

Հիմա ո՞վ է անձնագոհը, էդ որբերին պահողը՞, թե ես... Ո՞վ է անձնագոհը, Վարսենիկը՞, որ թխսկան մոր նման թևի տակ առավ իր համար օտար երեխային, թե ես... Աստված տա՝ չմեռնեմ: Եթե ապրեմ, նոր ամեն ինչ կանեմ անձնագոհ լինելու համար, ընկեր Ժենյա... Մենակ թե ապրեմ:

ԺԵՆՅԱ – Եվա, թանկագինս, ես ոչ մի մտադրություն չեմ ունեցել վիրավորելու ձեզ: Երդվում եմ: Ես ուղղակի, չգիտեմ ինչպես ասել, ես...

ԵՎԱ – Խղճացել ես ինձ, ուսուցչուհի:

ԺԵՆՅԱ – Ես... փորձել եմ ինչ-որ կերպ մխիթարել ձեզ... Ես կարծել եմ, որ դուք հենց դա եք ուզում... Մի փոքրիկ, անմեղ սուտ: Ի վերջո մենք բոլորս էլ փոքրիկ-փոքրիկ ստեր ենք հորինում, որպեսզի կարողանանք ապրել, Եվա...

ԵՎԱ – Իսկ ես սուտ չեմ ուզում, ընկեր Ժենյա: Մենակ ափսոս, որ շատ ուշ հասկացա դա:

*(Դուրս է գալիս)*

ԺԵՆՅԱ – Եվա, սիրելիս, մի բռպե, ես հիմա քեզ ամեն ինչ կփորձեմ բացատրել... Եվա...

*(Դուրս է գալիս: Հեռախոսակայանում լռություն է: Հետո հանկարծ սկսում են միանգամից բարձր հնչել հեռախոսի զանգերը: Երկար, ուժգին, համառ: Ներս է գալիս Կամոն)*

ԿԱՄՈ – Այո՞ ... Եվա... *(Ձայնում է)* Եվա... *(Մոտենում է պատուհանին)* Մամա Եվա... Օհ... Եվա մայրիկ... *(նայում է զանգող հեռախոսներին, արագ մոտենում, վերցնում է լսափողը, հետո մյուսը)*

Այո՞ ... Հոնուտ... Հոնուտ... ապրել... օհ, Հոնուտ լսել... *(Կնճռոտվում է, հետո միանգամից պայծառանում է դեմքը)* Հոնուտը լսում է:

*ՎԱՐՎԱՐՈՒՅՐ*

*ՎԱՌՆԱ*

*4 նոյեմբերի 1983թ.*